



ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դավիթ Ասատրյան

Արա Ղազարյան

© «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան ՀԿ

Երևան 2022թ.



ԵՎՐԱՍԻԱ
ԿԱՄԱԳՈՐԾԱԿԹՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ»

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ

Հետազոտությունը հայերեն հրատարակություն է, որը պատրաստել է «Իրավունքի Գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը՝ «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում, որը իրականացնում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը «Հելսինկյան ասոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ:

Հետազոտության բովանդակությունը և արտահայտված տեսակետները միմիայն «Իրավունքի Գերակայություն» իրավապաշտպան ՀԿ-ինն են և կարող են չհամընկնել Եվրասիա համագործակցություն հիմնադրամի, «Հելսինկյան ասոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների տեսակետներին:

Բովանդակության ցանկ

Հապավումներ..... 3

Ներածություն..... 3

Մեթոդաբանություն 7

1. Հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիությունը ՄԱԿ-ի և Եվրոպական կոնվենցիաների լույսի ներքո..... 9

1.1. ՄԱԿ-ի կոնվենցիայի և Եվրոպական կոնվենցիայի փոխհատվելիությունը..... 9

1.2. ՄԻԵԴ նախադեպային իրավունքը 13

1.3. Պետության կողմից ստանձնած պարտավորությունների բնույթը..... 16

2. Հաշմանդամություն ունեցող անձանց դատարանի մատչելիության իրավական երաշխիքները..... 19

2.1. Ներպետական օրենսդրական կարգավորումները..... 19

2.2. Ներպետական ռազմավարություններ և հայեցակարգեր..... 25

3. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ դատարանի ֆիզիկական և հաղորդակցային մատչելիությունը..... 34

3.1. Դատարանների հաղորդակցային մատչելիությունը 34

3.2. Դատարանների ֆիզիկական մատչելիությունը..... 40

Անփոփում և առաջարկություններ..... 44

Հապավումներ

| | |
|------------------------------|--------------------------------------------------------------------|
| ԱԺ | Ազգային ժողով |
| ԵՄ | Եվրոպական միություն |
| ԵԽ | Եվրոպայի խորհուրդ |
| ԶԼՄ | Զանգվածային լրատվության միջոցներ |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՄԱԿ-ի կոնվենցիա | Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա |
| ՄԱԿ | Միավորված ազգերի կազմակերպություն |
| Եվրոպական կոնվենցիա կամ ՄԻԵԿ | Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիա |
| ՄԻԵԴ | Մարդու իրավունքների եվրոպական դատարան |
| ՄԴ | Մահմանադրական դատարան |
| ՔՀԿ | Քաղաքացիական հասարակության կազմակերպություն |
| ՔԿՀ | Քրեակատարողական հիմնարկ |
| ԲԴԽ | Բարձրագույն դատական խորհուրդ |

Ներածություն

Համաձայն վիճակագրական տվյալների՝ Հայաստանում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը 2020թ. դրությամբ կազմում է 191827 մարդ¹: ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից 2021թ. վերաբերյալ տեղեկատվություն չի հրապարակվել, սակայն հաշվի առնելով 2020թ. տեղի ունեցած 44-օրյա պատերազմի հետևանքները, ցավոք, այդ թիվը սպասելի չէ:

Մահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով երաշխավորվում է յուրաքանչյուր անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունը, հավասարությունը օրենքի առջև և արգելվում է այս իրավունքների ապահովումը խտրականորեն՝ այդ թվում նաև անձի հաշմանդամության հիմքով:

¹ Հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թվականակը համաձայն Վիճակագրական կոմիտեի, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://armstat.am/file/article/sv_01_21a_530.pdf.

«Իրավունքի Գերակայություն» իրավապաշտպան ՀԿ-ի անդամների և աշխատակիցների կողմից իրավապաշտպան գործունեության ընթացքում ստացվում էին տվյալներ այն մասին, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար դատարաններում առկա են դատարանի մատչելիության վերաբերյալ խնդիրներ: Առկա է նաև դատարանում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքի և ընկալման հետ կապված խնդիրներ, որոնք ոլորտի մասնակիցների ոչ բավարար հմտություններ ունենալու հետևանք է: Հայտնաբերված խնդիրները որոշ դեպքերում լուծվել են փաստաբանի համառ և հետևողական աշխատանքի շնորհիվ, սակայն հաշմանդամություն ունեցող անձանց դատարանի մատչելիությունը պետք է լինի գործնական ու իրական, այլ ոչ թե ապահովվի պայքարի արդյունքում:

Այս հարցին 2020 թվականի տարեկան հաղորդման մեջ անդրադարձել է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը՝ նշելով. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ապահովումը հաճախ վերջիններիս [պաշտոնատար անձանց] կողմից ընկալվում է, որպես պաշտոնատար անձի հոգաձության և բարեգթության դրսևորում, և ոչ թե պետության այլընտրանք չունեցող պարտավորություն, ինչը սկզբունքային անթույլատրելի է²»:

«Հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիությունը Հայաստանում» ծրագրի (ստորև նաև՝ Ծրագիր) շրջանակներում առաջադրվել էր հետևյալ երեք խնդիրները. 1. բացահայտել դատարաններում հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները և դրանց պատճառները, մասնավորապես՝ ֆիզիկական և հաղորդակցային խոչընդոտները. 2. Պարզել, արդյո՞ք Հայաստանը պատշաճ կերպով է կատարում դատարանի մատչելիությունը ապահովելու մասին Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ «Հաշմանդամություն ունեցող իրավունքների մասին» կոնվենցիայով սահմանված պարտականությունները: Եվ, վերջապես, պարզել խնդիրների լուծման հասցեատերերին, առաջարկել լուծման ճանապարհներ, ներկայացնել առաջարկություններ, բարձրացնել հանրային մասնակցությունը և վերահսկողությունը:

Դատարաններում ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ առկա են հաշմանդամություն ունեցող անձանց դատարանների ֆիզիկական մատչելիության լուրջ խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ չկա բավարար պլանավորված ռազմավարություն:

Իրավակիրառ նորմատիվ բազայի, փաստացի իրավիճակի և շահառուների հետ քննարկումները և հարցազրույցները ցույց են տալիս, որ առկա է նաև հաշմանդամություն

² 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եվ ազատությունների պաշտպանության վիճակի մասին, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> 1312-րդ էջ:

ունեցող անձանց հաղորդակցային մատչելիության լրջագույն խնդիրներ, որոնցից գլխավորում է ոլորտի վերաբերյալ ոչ համակարգային աշխատանքներ չիրականացնելու հետևանքները:

Դատական իշխանության, գործադիր և օրենսդիր իշխանության պաշտոնատար անձանց հետ հանդիպում քննարկումները թույլ տվեցին կատարել եզրահանգումներ խնդիրների վերաբերյալ իրականացվող և իրականացվելիք միջոցառումների մասին, պետական քաղաքականությունը և խնդիրները լուծելու հնարավոր տարբերակների և օրենսդրական կարգավորումների շրջանակներում առկա խնդիրները լուծելու նպատակով:

Ուսումնասիրությունները նաև ցույց են տվել, որ դատարաններում հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված համընդհանուր դիզայնի, աջակցող միջոցների, խելամիտ հարմարեցումների բավարար հնարավորություններ ստեղծված չեն: Թեկուզև դատավարական օրենսգրքով սահմանվել են որոշակի կարգավորումներ, սակայն դրանց ոչ բավարար լինելը, վիճելի դրույթներ պարունակելը և գործնական կիրառության հետ կապված խնդիրները արգելակում են հաշմանդամություն ունեցող անձանց դատարանի մատչելիությունը:

Առկա սահմանափակումները հանգեցնում են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի խախտմանը, մասնավորապես, կոնվենցիայով սահմանված այնպիսի իրավունքների, ինչպիսին են խտրականության արգելքի, մատչելիության, ներառականության, արժանապատվության նկատմամբ հարգանքին: Ավելին, իրավիճակը հանգեցնում է նաև ՄԻԵԿ և ՀՀ սահմանադրությամբ սահմանված արդար դատական քննության իրավունքի անքակտելի մաս կազմող՝ դատարանի մատչելիության, մրցակցային դատավարության իրավունքների խախտմանը՝ անձը գրկվում է դատավարության այլ մասնակիցների հետ հավասար իրավունքներ ունենալու հնարավորությունից: Խախտվում է նաև անձանց անձնական կյանքի հարգման իրավունքը, արժանապատվության անքակտելիությունը, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, որոնք կարող են հանգեցնել խորը հոգեբանական տվայտանքների, որն էլ իր հերթին կարող է անցնել վատ վերաբերմունքի նվազագույն շեմը:

Նշվածը ներկայացնենք հետևյալ օրինակներով. դատական կարգադրիչների հետ հարցազրույցներից պարզվեց, որ թեքահարթակների և այլ ողջամիտ հարմարեցումների բացակայության պայմաններում դատական կարգադրիչները հենաշարժողական խնդիրներ ունեցող դատավարության մասնակիցներին դատարանի նիստերի դահլիճ կամ կալանավորների համար նախատեսված խուց տեղափոխում են որոշ դեպքերում գրկած, իսկ անվասայլակով տեղաշարժվող անձանց համար դատական նիստերի դահլիճից արթոնների մի քանի շարք հեռացնում են, որպեսզի նրանք կարողանան տեղավորվել դահլիճում: Վճռաբեկ դատարանի շենքի վերելակի դռների նեղ լինելու պատճառով անվասայլակով տեղաշարժվող

անձանց բարձրացնում են դատական նիստերի դահլիճ ետնամասով՝ ծառայողական մուտքով: Թվում է, թե նման անհատական միջոցառումների կիրառումով դատական կարգադրիչների դրսևորում են ուշադրություն, ինչպես նաև լուծում են դատարանի մատչելիության հարցը. հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն են ստանում ի վերջո մասնակցել դատական նիստերին: Այդուհանդերձ, դատավարության մասնակցին կամ կալանավորին գրկած տեղափոխելը նվաստացուցիչ վերաբերմունք է հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ իրենց սեփական և այլոց աչքերում:

Նման անհատական տարբերակված մոտեցումները խախտում են նրանց *արժանապատվությունը, ինքնուրույնությունը և անկախությունը*, իսկ դատարանի շենք հետնամուտքով ուղղորդելը խախտում է հանրային կյանքում բոլորի հետ *ներգրավվածությունը և մասնակցությունը*, քանի որ հակառակ դեպքում նրանք կնախընտրեին դատարանի շենք մուտք գործել բոլոր հետ միասին՝ նույն մուտքով: Սրանք ՄԱԿ-ի կոնվենցիայի հիմնարար սկզբունքներ են և պետք է դրանք ապահովել ցանկացած իրավահարաբերությունում՝ նաև դատարանի մատչելիությունն ապահովելիս: Հետևաբար, անհիմն է պնդելը, թե անհատական ուշադրություն և ջանքեր կիրառելով լուծվում է դատարանի մատչելիության խնդիրը, եթե դա լուծվում է նշված հիմնարար, ընդհանուր սկզբունքներ-իրավունքների խախտումներով:

Հետազոտության շրջանակներում պարզվեցին նաև այնպիսի ընթացակարգեր, որոնք իրենց էությանը խտրական են: Խտրականության արգելքը ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված մեկ այլ հիմնարար իրավունք է: Դա սահմանված է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (հոդված 14): Հետազոտության ընթացքում պարզվեց, որ ի տարբերություն քրեական գործերով դատական վարույթների, քաղաքացիական և վարչական գործերով պետությունը դատավարություններում սուրդոթարգմանության և տեսողական խնդիրներ ունեցող անձանց աջակցող ծառայությունները պետության կողմից անվճար չեն տրամադրվում՝ հետագայում որպես դատական ծախս կարող են այն վճարելու պարտավորություն կրեն: Որևէ ողջամիտ բացատրություն չի ներկայացվել նման տարբերակված վերաբերմունքի համար, որն առավել հիմնավոր է դարձնում խտրական վերաբերմունքի մասին պնդումը, քանի որ խտրականությունը տարբերակված վերաբերմունք է երկու էապես նման խմբերի նկատմամբ՝ առանց օբյեկտիվ հիմքերի առկայության: Խնդիրը տվյալ դեպքում ոչ թե ռեսուրսների բացակայության, այլ կոնցեպտի և կառավարչության թերության մեջ է:

Այսպիսով, վերը նշված օրինակները ցույց են տալիս, որ դատական համակարգում առկա են և՛ ֆիզիկական միջավայրի, և հաղորդակցության միջոցների մատչելիության լուրջ խնդիրներ, որոնց որոշ մասը թեև կոնկրետ իրավիճակներում, անհատական միջոցներով մեծամասամբ հաղթահարվում են, սակայն՝ միայն այնքանով, որքանով ապահովվում է դատարանի մատչելիությունը քաղաքացիների համար, մինչդեռ չեն վերացվում ՄԱԿ-ի կոնվենցիայի

հիմնարար սկզբունքների, իսկ որոշ դեպքերում նաև Եվրոպական կոնվենցիայի խախտումները: Ավելին, որոշ դեպքերում հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ անհատականացված միջոցների կիրառումը կատարվում է նշված երկու կոնվենցիաների հիմնարար սկզբունքների խախտումով՝ ինչպես ցույց տրվեց վերևում:

Հաշվի առնելով որ ՄԱԿ-ի կոնվենցիայի սկզբունքները սահմանված են նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, դատարաններում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ կիրառվող այն ընթացակարգերը և վերաբերմունքը, որոնք ներկայացվեցին վերևում, խախտում են նաև ՀՀ օրենքը:

Մեթոդաբանություն

Ծրագրի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց դատարանի մատչելիության վերաբերյալ իրավիճակային վերլուծություն իրականացնելու նպատակով կազմակերպության կողմից մշակվել է մեթոդաբանություն:

Որպես որակական ուսումնասիրության մեթոդ՝ իրականացվել է քարտեզագրում (mapping), մասնավորապես՝ դաշտի (ոլորտի) և գործիքակազմի, նախադեպային որոշումների, սահմանադրական դատարանի, ՄԻԵԴ որոշումների, նախարարների կոմիտեի որոշումների, ներպետական և միջազգային զեկույցների, միջազգային փորձի ուսումնասիրություն, ինչպես նաև քննարկումներ շահառուների, քաղաքացիական հասարակության և պետության և համայնքի ներկայացուցիչների հետ:

Սույն փաստաթուղթը պատրաստվել է հետևյալ բնագավառներում առկա օրենսդրական և գործնական խնդիրների վերհանման և դիտարկման հիման վրա.

- 1) Դատարանների ֆիզիկական մատչելիություն,
- 2) Դատարանների հաղորդակցության մատչելիություն,
- 3) Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ դատարաններում անհավասարության և խտրականության վերաբերմունքի բացառում:

Ծրագրի շրջանակներում ընդհանուր առմամբ այցելությամբ և տեղում ուսումնասիրվել է Հայաստանում գործող և չգործող բոլոր դատարանների շենքային պայմանները՝ ընդհանուր 45 մասնաշենքեր, ուսումնասիրվել է նաև Բարձրագույն դատական խորհրդի և Հանրային պաշտպանի գրասենյակի շենքային պայմանները: Ծրագրի շրջանակներում քննարկումներ են իրականացվել շուրջ 8 հասարակական կազմակերպությունների և շուրջ 20 շահագրգիռ անձանց հետ: Քննարկումներ են իրականացվել նաև ոլորտին առնչություն ունեցող Բարձրագույն դատական խորհրդի ներկայացուցիչների, Արդարադատության նախարարության աշխատակիցների և Ազգային ժողովի պատգամավորի հետ: Արդյունքները

ամփոփվել և վերլուծվել են, իսկ եզրահանգումները արտացոլված են սույն հետազոտական աշխատանքում:

Վերլուծական մեթոդի կիրառմամբ իրականացվել է բարձրացված օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրություն: Հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել համապատասխան միջազգային կոնվենցիաները, ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի մեկնաբանությունները և եզրափակիչ դիտարկումները: Իրավունքի հետ կապված յուրաքանչյուր խնդիր քննարկելիս վերլուծվում են համապատասխան միջազգային չափանիշներն ու մոտեցումները, նկարագրվում են օրենսդրական և գործնական խնդիրները՝ բողոքների և իրականացրած մշտադիտարկման այցերով հավաքված փաստերի ներկայացմամբ:

Բացի այդ, ուսումնասիրվել են հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ստեղծված և ղեկավարվող կազմակերպությունների (Organizations of Persons with Disabilities) և այլ իրավապաշտպան կազմակերպությունների մեկնաբանությունները, տարբեր շահագրգիռ և թիրախային խմբերի հետ քննարկումների արդյունքները, տարբեր պետական և ոչ-պետական կառույցներին ուղղված հարցադրումների պատասխանները: Եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվել նաև ոլորտի այլ հասարակական կազմակերպությունների տրամադրած տեղեկությունները և ՋԼՄ-ների հրապարակած նյութերն ու ուսումնասիրությունները: Իրավիճակային վերլուծության ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել հաշմանդամություն ունեցող կանանց և երեխաներին առնչվող խնդիրներին:

Ծրագրի շրջանակում մշակվել են հարցումներ, որոնք ուղարկվել են պետական իրավասու մարմիններին, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին Բարձրագույն դատական խորհրդին, Արդարադատության նախարարությանը: Ընդ որում, կազմվել են առանձին հարցումներ՝ հիմք ընդունելով ներպետական օրենսդրության կարգավորումները, միջազգային չափանիշները, ինչպես նաև յուրաքանչյուր մարմնի իրավասության շրջանակները: Ըստ այդմ, սույն փաստաթղթում տեղ են գտել նաև հարցումների արդյունքում ստացված տվյալները, այդ թվում՝ վիճակագրական տվյալներ:

Սույն եզրակացությունը կազմվել է բացահայտված յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ համապատասխան գնահատականներ ու եզրահանգումներ՝ օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայում առկա թերացումները վերացնելու ուղղությունների նախանշմամբ:

Որակական տվյալների վերլուծության, համադրման և ներկայացման մեթոդով կազմվել և սույնով ներկայացվում է հետազոտությունը և օրենսդրական կարգավորումների վերաբերյալ առաջարկությունները, որտեղ արտացոլված են այն ճանապարհները, որոնք ունակ են կարգավորել առկա և բացահայտված խնդիրները:

1. Հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիությունը ՄԱԿ-ի և Եվրոպական կոնվենցիաների լույսի ներքո

1.1. ՄԱԿ-ի կոնվենցիայի և Եվրոպական կոնվենցիայի փոխհատվելիությունը

2007 թվականի դեկտեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության ստորագրությամբ և 2009 թվականի դեկտեմբերի 18-ի Սահմանադրական դատարանի որոշմամբ Հայաստանը ստանձնել է [Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին](#) ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված պարտավորությունները: Կոնվենցիայի [կամրնտիր արձանագրությունը](#), որով սահմանվում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե անհատական զանգատ ներկայացնելու ընթացակարգ, Կառավարությունը 2020 թվականի հունիսի 11-ին ընդունել է արձանագրությունը հավանություն տալու օրենքի նախագիծը, իսկ Սահմանադրական դատարանը 2020 թվականի հոկտեմբերի 27-ի [ՍԴՈ-1556](#) որոշմամբ որոշել է, որ կամրնտիր արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Օրենքի նախագիծը թեկուզև մասնագիտական փորձաքննության արդյունքներով ստացել է դրական եզրակացություն, սակայն սույն հետազոտության կազմման դրությամբ դեռևս չի ընդգրկվել Ազգային Ժողովի օրակարգում: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունից ելնելով ՄԱԿ-ի կոնվենցիայի կամրնտիր արձանագրության վավերացման գործընթացի դանդաղ իրականանալը խնդրահարույց է դիտարկել և՛ Մարդու իրավունքների պաշտպանը, և՛ բազմաթիվ ՔՀԿ-ներ:

Ուսումնասիրության ենթարկելով ՄԱԿ-ի կոնվենցիան, պարզ է դառնում, որ կոնվենցիայի 35-րդ հոդվածը պարտավորեցնում է Անդամ Պետություններին կոնվենցիան վավերացնելուց հետո 2 տարվա ընթացքում, իսկ այնուհետև յուրաքանչյուր 4 տարին մեկ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին ներկայացնել հաշվետվություն կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված միջոցառումների և այդ հարցերում արձանագրված առաջընթացի մասին:

2017 թվականի մայիսի 8-ին կոմիտեի կողմից ներկայացվել է³ մի շարք հարցերում մտահոգություններ

- ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց ամբողջական և հավասար մասնակցությունը հաշմանդամության վերաբերյալ օրենսդրության, քաղաքականության, ռազմավարության և այլ գործողության ծրագրերի մասին

³ Կոմիտեի դիտարկումները Հայաստանի զեկույցի վերաբերյալ. հասանելի է հետևյալ հղումով՝ https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD/C/ARM/CO/1&Lang=En

որոշումների կայացման և մշակման գործընթացներին ու այդ նպատակով ապահովել աջակցություն և խելամիտ հարմարություններ հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար, այդ թվում՝ կանանց, երեխաներին, փախստականներին ու ապաստան հայցողներին, ԼԳԲՏ անձանց, մտավոր հաշմանդամություն և այլ տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ով հիվանդ անձանց, մեծ աջակցության կարիք ունեցող անձանց և անձանց, ովքեր ապրում են գյուղական համայնքներում, խորհրդատվություն տրամադրելու հարցում.

- Բարեփոխել օրենսդրությունը և համապատասխանեցնել հաշմանդամության մարդու իրավունքների մոդելի պահանջներին.
- վերանայել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին օրենքի նախագիծը՝ ապահովելով, որ դա համապատասխանի կոնվենցիային և Կոմիտեի ընդհանուր առաջարկություններին.
- վավերացնել Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը.
- ընդունել հաշմանդամության մարդու իրավունքների մոդելը և ապահովել, որ հաշմանդամությունը որոշվի հիմք ընդունելով հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական մասնակցության խոչընդոտները և անձնական պահանջները, կամքը և նախընտրությունները.
- մեծացնել Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով ազգային հանձնաժողովի կարողությունները՝ ապահովելու համար հաշմանդամության ոլորտում հանրային քաղաքականության ծրագրերի իրականացման ուղղությամբ միջոլորտային համակարգումը:

Հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիության հարցը ազգային իրավական համակարգում, ինչպես նաև միջազգային իրավունքում դիտարկվում է նախ և առաջ ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածի ներքո, որը պետությունների համար սահմանում է ընդհանուր պարտավորություն տրամադրելու այնպիսի հնարավորություններ, որոնք թույլ կտան ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ մասնակցությունը՝ որպես ուղղակի կամ անուղղակի մասնակիցներ, ինչպես նաև որպես վկաներ, մինչդատական և դատական բոլոր փուլերում:

Այդուհանդերձ, մատչելիությունը շատ ավելի լայն հասկացություն է, և այն չպետք է ընկալել զուտ դատավարական ընթացակարգերի իմաստով: Հաշմանդամություն ունեցող անձը կարող է գրկվել արդարադատության մատչելիությունից ոչ միայն այն պատճառով, որ օրինակ, դատարանի որոշումով նախկինում ճանաչվել է անգործունակ, և դատարանը չի ծանուցել անձին դատական նիստի մասին, այլ նաև այն պատճառով, որ դատարանի շենքային պայմանները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձի կարիքներին, կամ դատարանը չի ապահովել աջակցության ծառայություն տեսողական խնդիրներ ունեցող անձի համար, կամ չի ապահովել սուրդոթարգմանություն կամ առկա են այլ միջավայրային

արգելքներ:⁴ Այդ պատճառով, ՄԱԿ-ի կոնվենցիայով մատչելիությունը սահմանված է որպես կոնվենցիայի հիմնարար սկզբունք (հոդված 3, կետ գ), ինչպես նաև որպես ինքնուրույն իրավունք (հոդված 9):

ՄԱԿ-ի կոնվենցիայում մատչելիությունը ներառում է երկու առանձին բաղադրատարր. ֆիզիկական միջավայրի մատչելիություն և հաղորդակցության միջոցների մատչելիություն: Արդարադատության մատչելիությունը անհրաժեշտ է ապահովել այս երկու միջավայրերում. անհրաժեշտ է ապահովել և՛ դատարանների շենքային պայմանների մատչելիությունը (օրինակ, թեքահարթակներ, հարմարեցումներ սանհանգույցներում, վերելակներ և այլն), և՛ դատական նիստերի դահլիճում հաղորդակցության միջոցների մատչելիությունը (սուրդոթարգմանություն, բռայլի այբուբենի կիրառում և այլն):

Այսպիսով, հաշմանդամություն ունեցող անձանց համար արդարադատության մատչելիությունը չի ներառում միայն դատավարության սուբյեկտի կարգավիճակը: Պրակտիկայում այն ներառում է առավելապես միջավայրային արգելքների բացակայությունը:⁵

Վերը նշված հասկացություններն ամբողջությամբ ընդգրկված են նաև Եվրոպական կոնվենցիայում և ՄԻԵԴ նախադեպային իրավունքում: Եվրոպական կոնվենցիայի ներքո մատչելիության իրավունքը դրսևորվում է տարբեր հիմնական իրավունքների շրջանակներում, օրինակ, արդար դատաքննության իրավունքը՝ դատարանի իրավունքի շրջանակում (հոդված 6), անձնական ու ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը՝ իրավունակության ինդիկսների առնչությամբ (հոդված 8), խտրականության արգելքը (հոդված 14), իրավական պաշտպանության արդյունավետ միջոցը՝ անգործունակ ճանաչված անձանց պարագայում (հոդված 13), խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքը (հոդված 3 – միայն վարույթային բաղադրիչը) և ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը (հոդված 5 – միայն վարույթային բաղադրիչը):

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի կոնվենցիային, արդարադատության մատչելիության հարցը ՄԱԿ-ի կոնվենցիայի շրջանակում դրսևորվում է հոդված 2-ի հիմքով, որը տրամադրում է խտրականություն և ողջամիտ հարմարեցումների սահմանումները, հոդված 3-ի հիմքով, որը սահմանում է կոնվենցիայի հիմնարար սկզբունքները, որոնց թվում՝ ա) հարգանք արժանապատվության, անհատի ինքնուրույնության, ազատ ընտրության և անձի

⁴ Հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների մասին ՀՀ օրենքի համաձայն, նշված բոլոր արգելքները սահմանվում են որպես միջավայրային արգելքներ:

⁵ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՀՀ օրենքի համաձայն, միջավայրային արգելքներ են՝ անձի միջավայրում այնպիսի խոչընդոտող գործոններ (ներառյալ անմատչելի ֆիզիկական միջավայրը, տեղեկատվական և հաղորդակցական խոչընդոտները, համապատասխան աջակցող միջոցների բացակայությունը, հաշմանդամության նկատմամբ մարդկանց բացասական վերաբերմունքը), որոնք սահմանափակում են անձի ֆունկցիոնալությունը և խանգարում են հասարակական կյանքին անձի սոցիալական ներառմանը և լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը:

անկախության իրավունքի նկատմամբ, հողված 9-ի ներքո, որը սահմանում է մատչելիություն հասկացությունը իր բոլոր բաղադրիչներով՝ ֆիզիկական միջավայր և հաղորդակցության միջոցներ, և հողված 20-ի ներքո (անհատական շարժունակություն):

Եթե համադրենք ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը ՄԱԿ-ի կոնվենցիայի հետ, հաշվի առնելով, ինչպես նշվեց վերևում, այս երկու իրավական փաստաթղթերի բովանդակային փոխհաստվելիությունը, ստացվում է, որ ՄԻԵԴ-ը դատարանի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար դիտարկում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի երեք հիմնարար սկզբունքների ներքո, որոնք սահմանված են կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո.

ա) հարգանք արժանապատվության, անհատի ինքնությունության, ազատ ընտրության և անձի անկախության իրավունքի նկատմամբ,

բ) հանրային կյանքում լիակատար և արդյունավետ մասնակցություն և ներգրավվածություն, և

Այս երեք սկզբունքները, հաշվի առնելով դրանց հիմնարար, ըստ այդմ՝ ունիվերսալ բնույթը, կիրառելի են կոնվենցիային առնչվող բոլոր իրավահարաբերությունների, այդ թվում նաև արդարադատության մատչելիության առումով: Հետևաբար, արդարադատության համակարգի մատչելիությունը պետք է ապահովվի ոչ միայն ելնելով անձի դատավարական իրավունքները հարգելու ընդհանուր պարտականությունից, որը բխում է Սահմանադրության 63 և 67-րդ հոդվածների երաշխիքներից, այլ նաև հաշմանդամություն ունեցող անձի *արժանապատվության, ինքնությունության, անկախության* նկատմամբ հարգանքից, հանրային կյանքում (տվյալ դեպքում՝ դատարանում, դատական վարությունում) լիակատար և արդյունավետ *մասնակցություն և ներգրավվածություն* ունենալու և *միջավայրային արգելքները* հաղթահարելու նպատակներից՝ արդարադատության մատչելիությանն առնչվող բոլոր իրավահարաբերություններում:

Այլ կերպ ասած՝ բավարար չէ արդարադատության համակարգի ֆիզիկական մատչելիությունը **անձի համար ապահովելը**: Անհրաժեշտ է մատչելիությունը ապահովել նաև այնպես, որ անձը չգրկվի ինքնությունությունից, ինքնություն կերպով որոշումներ կայացնելու հնարավորությունից, չվնասվի անձի արժանապատվությունը և անձը իր կամ այլոց աչքերում նվաստացած չզգաս:

Վերը նշվածից բխում է, որ Եվրոպական կոնվենցիան և ՄԱԿ-ի կոնվենցիան հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր իրավունքների և, մասնավորապես, արդարադատության մատչելիության հարցում **փոխհաստվում են**: ՄԻԵԴ-ը բազմաթիվ

դատական ակտերում վկայակոչում է ՄԱԿ-ի կոնվենցիան և դրանով սահմանված չափանիշները և սահմանումները: Սա ՄԻԵԴ-ի պրակտիկայում տարածված երևույթ է:⁶

1.2. ՄԻԵԴ նախադեպային իրավունքը

Վերոգրյալում արդեն նշվեց, որ իրավական գործընթացներում մատչելիության իրավունքի միջամտությունը դրսևորվում է երկու եղանակով՝ որպես դատավարության սուբյեկտ իրավական արգելքներով և միջավայրային արգելքներով:

Ինչ վերաբերում է սուբյեկտայնությանը, ՄԻԵԴ-ը անդրադարձել է այնպիսի իրավիճակների, երբ հաշմանդամություն ունեցող անձինք զրկվել են դատարանում հանդես գալու, դատարանում որպես կողմ ներկայացված լինելու, դատավարական տարբեր գործողություններին մասնակցելու և ընդհանրապես, դատական վարույթին արդյունավետ և գործուն մասնակցություն ունենալու հնարավորությունից՝ նույնիսկ այն դեպքում, երբ դատական վարույթի շրջանակներում քննվել են իրենց իրավունքներին ու շահերին վերաբերող կամ առնչվող հարցեր: Դրանք կարող են լինել իրավունակության հետ կապված հարցեր, ինչպես նաև դրանից ածանցվող կամ ինքնուրույն դրսևորվող գույքային, ծնողական, ընտանեկան, ժառանգության և այլ մասնավոր իրավահարաբերություններին առնչվող հարցեր, որոնք առանց տվյալ անձի մասնակցության, փաստորեն վիճարկվում են այլ անձանց կողմից, ովքեր, հանդիսանալով հաշմանդամություն ունեցող անձի խնամակալ, օժտված են նրա մասնավոր կյանքի վերաբերյալ որոշումներ կայացնելու լիակատար ազատությամբ: Սա բխում է այն մտայնությունից, որ մտավոր հաշմանդամություն ունեցող անձը չի կարող լինել իրավունակ: Մինչդեռ, ՄԻԵԴ-ը բազմիցս անդրադարձել է այդ խնդրին և նշել, որ մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք շարունակում են պահպանել իրենց իրավունակությունը՝ նույնիսկ եթե ազգային դատարանը նրանց ճանաչել է անգործունակ⁷: Սուբյեկտիվությանն առումով ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումները ամփոփվում են հետևյալում.

⁶ Տես, օրինակ, Էնվեր Սահինն ընդդեմ Թուրքիայի, թիվ 23065/12 , 30/01/2018: Կետ 19: Նույն ակտի 25-րդ կետում դատարանը նշում է, որ կոնվենցիան պետք է մեկնաբանվի միջազգային այլ նորմերի հետ համահունչ և, օրինակ, եթե վիճահարույց հարցը վերաբերում է հաշմանդամություն ունեցող անձի կրթության իրավունքին, անհրաժեշտ է հաշվի առնել, թե ինչպես է այդ իրավունքը մեկնաբանվում Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի ներքո:

⁷ Սահմանադրական դատարանը 2015 թվականի ապրիլի 7-ին կայացված ՄԴՈ-1197 որոշման 7-րդ կետում անդրադարձել է անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերով դատավարական գործընթացին, նշելով, որ «օրենսգիրքը չի ամրագրում նաև դատարանի իրավունքները և պարտականությունները դատական նիստի կանչված այն անձի առնչությամբ, ում գործունակության հարցն է քննվում: Ստացվում է, որ զրկված չլինելով իրավասուբյեկտությունից, անձը, ում գործունակության հարցն է քննվում դատարանում, դատական նիստին կարող է մասնակցից լինել որպես լոկ «դատաքննության օբյեկտ»»: 2018 թվականի ապրիլի 9-ի Քաղաքացիական դատավարության

- Դատարանի մատչելիությունը մտավոր հաշմանդամության հիմքով անգործունակ ճանաչված անձի համար պետք է ապահովվի ուղղակի կերպով՝ չմիջնորդավորված կերպով և անկախ օրենքով սահմանված խնամակալի առկայության ([Նատայյա Միխայլենկոն ընդդեմ Ռուսաստանի](#), պարբ. 31),
- Անձը պետք է բոլոր դեպքերում ծանուցվի իր իրավունակությանն ու իր իրավունքներին առնչվող դատական վարույթների մասին, և դատարանը դա պետք կատարի իր նախաձեռնությամբ՝ անկախ կողմի միջնորդության առկայությունից ([Շտուկաստուրովն ընդդեմ Ռուսաստանի](#), պարբ. 69),
- Մտավոր կամ այլ տեսակի հաշմանդամության առկայության պարագայում անձին պետք է տրամադրվի դատարանում լսված լինելու հնարավորություն: Լսված լինելու իրավունքը ներառում է դատական նիստին անձամբ ներկա գտնվելու, դատական լսումներին անձամբ մասնակցելու, բողոքներ և միջնորդություններ ներկայացնելու, դատարանի հետ հաղորդակցվելու հնարավորություններ կամ, որպես այլընտրանք, իր փաստաբանի հետ դատարանում արդյունավետ կերպով հաղորդակցվելու հնարավորություն ([Salontaji-Drobnjak-ն ընդդեմ Սերբիայի](#), պարբ. 127):

ՄԻԵԴ պրակտիկան ուսումնասիրելիս հաշմանդամություն ունեցող անձանց համար դատարանների մատչելիությունը դիտարկել է երկու հարթությամբ՝ միջավայրային և հաղորդակցական: ՄԻԵԴ-ը դատարանների մատչելիության հարցը քննարկելիս հաճախակի հղում է կատարում առկա միջոցների հարմարեցված (appropriate) և արդյունավետ (effective) լինելու հանգամանքին ([Մ. Ս. -ն ընդդեմ Խորվաթիայի](#) պարբ. 157):

Ինչ վերաբերում է միջավայրային մատչելիությանը, ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը այդ առումով կարելի է ամփոփել հետևյալում.

- Եվրոպական դատարանը հաշվի է առնում ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածի ա) կետի, 9-րդ հոդված 1-ին մասի, 20-րդ հոդվածի և 24-րդ հոդվածի 1(ա) կետի համակցությամբ՝ հաշմանդամություն ունեցող անձի՝ արժանապատվության և ինքնուրույնության նկատմամբ հարգանքով հանդերձ ինքնուրույն ապրելու իրավունքը, որը համընկնում է եվրոպական կոնվենցիայի առարկայի հետ, որն է մարդու արժանապատվության և մարդկային ազատության նկատմամբ հարգանքը, որն անհրաժեշտորեն ընդգրկում է ինքնուրույն որոշումներ կայացնելու անձի ազատությունը:
- Եվրոպական դատարանը տարբերակում է մատչելիությունը ողջամիտ հարմարեցումից, և գտնում է, որ պետության պարտավորությունը ողջամիտ հարմարեցումների առումով, ի տարբերություն մատչելիության, պարտավորություն է, որը ծագում է կոնկրետ անհրաժեշտությունից ելնելով, ու այդ առումով անհրաժեշտ է

օրենսգրքով նախատեսվել են որոշակի երաշխիքներ, օրինակ՝ պարտադիր դատական նիստին ներկա գտնվելու և լսված լինելու իրավունքի սահմանումը:

հաշվի առնելը, որ ողջամիտ հարմարեցումների իրականացումը անհամաչափ ծանր բեռ չհանդիսանա տվյալ հաստատության համար:

- Սակայն դատարանն անթույլատրելի է համարում մատչելիության բարեփոխումների դարակավորումը մինչև անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունը, ու այս առումով դատարանի համար կարևոր է սկզբունքը, որ եթե պետության պարտավորությունը ներառում է պոզիտիվ պարտավորությունների հարց, պետությունը չի կարող դրսևորել պասիվ վարքագիծ ([Էնվեր Սահինն ընդդեմ Թուրքիայի](#), թիվ 23065/12 , 30/01/2018, կետ 58):

ՄԻԵԴ-ը նշել է, որ դատարանների մատչելիությունն ապահովելիս ֆիզիկական խոչընդոտները կարող են, հակասելով Կոնվենցիային, հանդես գալ որպես իրավական խոչընդոտներ՝ մինչև անգամ հանգեցնելով անձի արդար դատաքննության իրավունքի խախտման: ՄԻԵԴ-ը գտել է, որ սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց կողմից դատական գործընթացներ սկսելու անհնարինությունը, որը կապված է դատարաններում հատուկ մուտքերի բացակայության հետ, կարող է դիտարկվել որպես դատարանների մատչելիության իրավունքի խախտում, եթե առկա չեն իրավիճակը շտկելուն ուղղված այլընտրանքներ ([Տարկասն ընդդեմ Ռումինիայի](#)):

Ինչ վերաբերում է դատարանների կոմունիկացիոն մատչելիությանը, ապա ՄԻԵԴ-ը նշել է, որ հաշմանդամություն ունեցող անձինք պետք է ունենան հնարավորություն անձամբ կամ հարկ եղած դեպքում ներկայացուցչի միջոցով դատարանում հանդես գալու ([Սեյգերին ընդդեմ Գերմանիայի](#), պարբ. 22): Ընդ որում, ՄԻԵԴ-ը դատարանում հանդես գալու հնարավորությունը դիտարկել է խիստ բովանդակային առումով, ինչը բխում է Մ.Ս. -ն ընդդեմ Խորվաթիայի (No. 2) գործով դատարանի կողմից փաստերի գնահատումից, մասնավորապես, չնայած այն հանգամանքին, որ գործը քննող դատավորը այցելել էր դիմումատուին հիվանդանոցում, ՄԻԵԴ-ը գտել է, որ այնուամենայնիվ առկա չեն բավարար ապացույցներ հավաստելու, որ դիմումատուին տրվել է դատական նիստին արդյունավետ կերպով մասնակցելու հնարավորություն, կատարվել են համապատասխան հարմարեցումներ: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը նշել է, որ առկա չէ ապացույց, որ դատավորը դիմումատուին տեղեկացրել է վերջինիս իրավունքների մասին կամ քննարկել է դիմումատուի՝ նիստին մասնակցելու հնարավորությունը ([Մ.Ս. -ն ընդդեմ Խորվաթիայի](#), պարբ. 157):

Վերը նշվածից հետևում է, որ դատավարական ընթացակարգերի և միջավայրային մատչելիությունը պարտավորություններ են, որոնք պետք է կատարվեն անվերապահորեն: Սակայն այս երկուսից պետք է առանձնացնել ողջամիտ հարմարեցումների ապահովման պարտավորությունը, որի առումով պետության պարտավորությունները ծագում են անհրաժեշտաբար, սակայն դրանք ապահովվելու առումով պետությունը պետք է ցույց տա գործուն միջոցների կիրառում և խոսափի անգործություն դրսևորելուց:

1.3. Պետության կողմից ստանձնած պարտավորությունների բնույթը

Սույն ուսումնասիրությամբ պարզեցինք, որ ՀՀ դատարաններում առկա են արդարադատության մատչելիության հետ կապված լուրջ խնդիրներ պայմանավորված երկու խումբ հիմնախնդիրներով՝ անձի դատավարական կարգավիճակով և միջավայրային արգելքներով:

Երկու խումբ խնդիրներն էլ հանգեցնում են Հայաստանի կողմից վավերացված երկու միջազգային կոնվենցիաների և ՀՀ ներպետական օրենսդրական կարգավորումների խախտմանը: Հետևաբար, այդ խախտումները պետք է վերացվեն ՀՀ իշխանությունների կողմից, ու դա միայն դատական իշխանության խնդիրը չէ: Եթե դատավարական ընթացակարգերի արգելքների վերացումը դատական համակարգի և օրենսդիր մարմնի խնդիրն է, քանի որ դրանք կախված են օրենսդրության ու պրակտիկայի բարեփոխումից, միջավայրային արգելքները հիմնականում գործադիր իշխանության խնդիրն է, քանի որ նման արգելքների վերացումը կախված է ֆինանսական ու վարչական ռեսուրսների ներգրավումից, որոնք հիմնականում կառավարվում են գործադիր իշխանության կողմից:

Այդուհանդերձ, ուսումնասիրությունը ցույց է տվել, որ խնդիրների առկայությունը պայմանավորված չէ միայն ռեսուրսների բացակայությամբ: Թեև հասկանալի է, որ օրինակ, թեքահարթակների կառուցումը բոլոր դատարաններում պահանջում է ֆինանսական ռեսուրսներ, սակայն ինչով բացատրել այն հանգամանքը, որ թեքահարթակների կառուցումը և սպասարկումը շարունակաբար չի կատարվում, իսկ որոշ թեքահարթակներ էլ չեն բավարարում քաղաքաշինության նորմերին, կամ որ սանհանգույցներում ընդհանրապես չեն կատարվում ողջամիտ հարմարեցումները, իսկ սանիտարական պայմանները չեն բավարարում նվազագույն պահանջներին: Կամ, արդյոք առկա է օբյեկտիվ պատճառ, որ քրեական դատավարությունում խոսելու և լսելու խնդիրներ ունեցող անձանց թարգմանչական ծառայությունները փոխհատուցվում են, իսկ քաղաքացիական և վարչական դատավարություններում՝ ոչ, կամ որ դատարանների շենքերում իսպառ բացակայում են անվասայլակները կամ այլ աջակցող միջոցներ՝ անկախ այն հանգամանքից, որ տվյալ պահին դրանցից որևէ մեկի անհրաժեշտությունը չի ծագել: Նշված խնդիրները, և նույնանման բազմաթիվ այլ խնդիրների ուսումնասիրությունը վկայում է, որ ռեսուրսների անբավարարությունը նույնիսկ հիմնական պատճառը չէ առ այն, թե ինչու արդարադատության մատչելիության հարցը մինչև հիմա դեռ լուծված չէ և այս առումով ինչու՞մ է կայանում պետության բացթողումը:

Հասկանալու համար վերը նշվածը, նախ պետք է պարզել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ պետության պարտավորությունների բնույթը:

ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ապահովումը Մասնակից Պետությունների կողմից կարող է

կատարվել պրոգրեսիվ եղանակով՝ «աստիճանաբար հասնելով այդ իրավունքների լիակատար իրականացմանը՝ առկա միջոցների առավելագույն չափով»։ Իսկ եթե խնդիրը վերաբերում է մարդու հիմնարար իրավունքներին, պետության պարտավորությունը անմիջական է, անվերապահ, նման իրավունքների ապահովումը պետք է կատարվի անմիջապես, ու այդ առումով պարտականությունների պրոգրեսիվ կատարումը անթույլատրելի է։ Անթույլատրելի է նաև պետության կողմից ռեսուրսների անբավարարությունը վկայակոչելը՝ ի տարբերություն սոցիալական, մշակութային և տնտեսական իրավունքների, որոնց առումով պարտավորությունների կատարումը կախվածության մեջ է դրվում, ինչպես նշվեց վերևում, առկա միջոցների առավելագույն չափից։ Այն հանգամանքը, որ մարդու իրավունքների ապահովումը անմիջական պարտավորություն է, բխում է նաև կոնվենցիայի նույն 4-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի շարունակությունից, ըստ որի սոցիալական, մշակութային և տնտեսական իրավունքների լիակատար իրականացմանը պետք է հասնել՝ չխախտելով կոնվենցիայով սահմանված պարտավորությունները, «որոնք ենթակա են անհապաղ կատարման՝ միջազգային իրավունքի համաձայն»։

Վերը նշվածից բխում է, որ մատչելիության ապահովումը, սահմանված ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ և 19-րդ հոդվածներով⁸ որպես հիմնական իրավունք, պետության անմիջական պարտականություն է։ Միջավայրային բոլոր արգելքները, ֆիզիկական և տեղեկատվական/հաղորդակցական, ենթակա են վերացման անմիջապես ու անվերապահորեն։ Դրանց առկայությունը ՄԱԿ-ի կոնվենցիայի խախտում է։ Դրանց առկայությունը նաև Եվրոպական կոնվենցիայի խախտում է, քանի որ ինչպես նշվեց վերևում, Եվրոպական կոնվենցիան և ՄԱԿ-ի կոնվենցիան փոխհատվելի են։ Հետևաբար, մատչելիության բացակայությունը չի կարող պատճառաբանվել ռեսուրսների բացակայությամբ, իսկ դրանց կիսատ ապահովումը չի կարող հիմնավորվել նրանով, որ դրա լիակատար իրականացումը նախատեսվում է կատարել աստիճանաբար՝ պրոգրեսիվ եղանակով։ Դա հնարավոր է սոցիալ-տնտեսական, մշակութային իրավունքների առումով, սակայն անընդունելի է հիմնական իրավունքների առնչությամբ։ Հետևաբար, արդարադատության մատչելիության հետ կապված արձանագրված խնդիրները չի կարելի պայմանավորել ռեսուրսների բացակայությամբ, ու դրանք պայմանավորված են առավելապես քաղաքականության, ծրագրերի, նախաձեռնելիության, հայեցակարգի բացակայությամբ։

Հիմնական իրավունքների, մասնավորապես, մատչելիության մասին խոսելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ դրա ապահովման պետության անմիջական պարտականությունը նույնպես երկու բնույթ ունի։ Իրավական գործընթացներում դրանք սահմանված են ex ante և ex nunc տերմիններով։ Առաջինը ենթադրում է, որ պարտավորությունը ծագում է անկախ

⁸ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանվում է Կոնվենցիայի սկզբունքները, որոնցից են՝ հանրային կյանքում լիակատար և արդյունավետ մասնակցություն և ներգրավվածությունը, հնարավորությունների հավասարությունը և մատչելիությունը։ Իսկ Կոնվենցիայի 19-րդ հոդվածով սահմանվում է անձանց անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը։

կոնկրետ անձի կողմից մատչելիության վերաբերյալ պահանջ ներկայացնելու, մատչելիության անհրաժեշտություն առաջանալու հանգամանքից, իսկ երկրորդը ենթադրում է, որ պարտավորությունը ծագում է միայն կոնկրետ պահանջի առկայության, կոնկրետ հանգամանքներում մատչելիության անհրաժեշտություն առաջանալու դեպքում: Այս առումով Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոմիտեն իր [Թիվ 2 ընդհանուր մեկնաբանության](#) մեջ տարբերակել է ընդհանուր մատչելիությունը ողջամիտ հարմարեցումից և նշել, որ մատչելիությունը վերաբերում է մարդկանց խմբերին, իսկ ողջամիտ հարմարեցումը՝ անհատներին, հետևաբար մատչելիությունը ex ante պարտականություն է, իսկ ողջամիտ հարմարեցումը՝ ex nunc պարտականություն, որից բխում է, որ պետությունները պարտավոր են ապահովել մատչելիություն մինչ տվյալ շենք մտնելու կամ մինչև տվյալ ծառայությունից օգտվելու մասին քաղաքացու կողմից դիմում ստանալը:⁹

Կոմիտեն նաև նշում է, որ պետությունները չեն կարող տնտեսական սուղ միջոցները ներկայացնել որպես պատճառ մատչելիության «աստիճանական» ապահովումը չկատարելու համար, և որ մատչելիության ապահովումը «անվերապահ» պարտականություն է: Այս առումով կոմիտեն հատուկ շեշտում է, որ եթե ողջամիտ հարմարեցում ապահովվելու պարտականությունը կախված է պետության վրա դրա անհամաչափ բեռ հանդիսանալու հանգամանքից, ապա մատչելիության համար անհամաչափ բեռ հանդիսանալու պայմանը կիրառելի չէ:¹⁰

ՄԻԵԴ-ը նույնպես արդարադատության ընթացակարգային և միջավայրային մատչելիության հարցը համարում է ex ante պարտականություն: Երկու դեպքում էլ պարտավորությունների ծագումը կախված չէ կոնկրետ անձի կողմից կոնկրետ իրավիճակում դիմումի առկայությունից և անհրաժեշտության ծագումից: Դատական ընթացակարգերը պետք է անվերապահորեն հասանելի լինեն մտավոր հաշմանդամություն ունեցող անձին, իսկ միջավայրը պետք է ապահովված լինի տեղեկատվական/հաղորդակցության մատչելիության անհրաժեշտ սարքավորումներով, աջակցող առարկաներով և ծառայություններով: Նման ծառայությունների կամ առարկաների բացակայությունը (օրինակ՝ տեսալսողական սարքեր, աջակցող անձանց ծառայություններ, անվասայլակներ, հենասայլակներ, սուրդոթարգմանության ծառայություններ, բռայլի այբուբենի համար նախատեսված տեխնոլոգիաներ, և այլն) կարող է հանգեցնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3, 5, 6, 8, 13, 14-րդ հոդվածներով սահմանված իրավունքների խախտմանը:

Վերը նշվածից տարբերվում է ողջամիտ հարմարեցումների մասով պարտավորությունների բնույթը: Ողջամիտ հարմարեցումները հիմնականում վերաբերում են դատարանների շենքերի մուտքերի թեքահարթակներին, վերելակներին և սանհանգույցներում անհրաժեշտ

⁹ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե: Թիվ 2 ընդհանուր մեկնաբանություն (2014): Հոդված 9: Մատչելիություն: Տե՛ս կետ 25-ում:

¹⁰ Նույն տեղում:

հարմարեցումներին: Նշված հարմարեցումների ապահովումը թեև նույնպես ex ante պարտավորություն է և այդ առումով պարտավորությունների ապահովման պրոգրեսիվ (ռեսուրսներից կախված) մոտեցումը անընդունելի է, սակայն պետության պոզիտիվ պարտավորությունների շրջանակում հաշվի է առնվում ոչ թե միջոցների անհապաղ, այլ «աստիճանական» կատարումը (տե՛ս կոմիտեի Թիվ 2 Շնդհանուր մեկնաբանության սահմանումը վերևում այն մասին, որ պետությունը չի կարող ռեսուրսների սղությամբ հիմնավորել Բարեփոխումների աստիճանական կատարման անհնարինությունը): Դա նշանակում է, որ ողջամիտ հարմարեցումների մասով պետության պարտավորությունների կատարումը գնահատվում է նրանով, թե արդյոք ձեռնարկվում են ողջամիտ հարմարեցումներ կառուցելու շարունակական, հետևողական ջանքեր, ծրագրեր, միջոցառումներ, և այլն: Եթե նման ջանքեր տևական ժամանակ չեն կիրառվում, նման անգործությունը ex ante պարտավորության խախտում է:

Դիտարկելով սույն հետազոտության շրջանակում կատարված մոնիթորինգային տվյալները (տե՛ս Հավելված 1 և 2) վերաբերելի ստանդարտների համատեքստում՝ կարելի է նշել, որ դատարանների ֆիզիկական մատչելիությունը, պետության ex ante պարտավորությունների շրջանակում, Հայաստանի դատարաններից շատերում ապահովված չէ, և պետությունը շատ հաճախ որպես այլընտրանք առաջարկում է ողջամիտ հարմարեցումների միջոցով իրավիճակային լուծումներ տալը, ինչի խնդրահարույց լինելը արդեն իսկ քննարկվել է վերևում: Ասվածը վերաբերում է նաև դատարանների ընթացակարգային և հաղորդակցական մատչելիությանը:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց դատարանի մատչելիության իրավական երաշխիքները

2.2. Ներպետական օրենսդրական կարգավորումները

Անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից առաջնահերթ կարևորություն ունի այն հարցի պատասխանը, թե որքանով է հասանելի արդարադատությունը, որքան արդյունավետ են անձի խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի իրացման պայմանները և գործիքակազմը:

Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման լիարժեք երաշխավորումն անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու առաջնահերթ իրավական նախապայմաններից է: Ի թիվս այլնի, այդ հանգամանքով է պայմանավորված վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրականությունը հատկապես դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում գնահատելը¹¹:

Սահմանադրական դատարանը բազմաթիվ որոշումներ է ընդունել¹², որոնք վերաբերվում են արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրականության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարևորությունը դատավարական գործընթացներում:

Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից ընդհանրապես առաջնահերթ կարևոր է, թե որքանով է մատչելի (հասանելի) արդարադատությունը, ինչպիսի՞ իրավական պայմաններ են առաջադրված դատարանում հանդես գալու իրավունքը իրացնելու համար, հետևաբար, նաև դրանով պայմանավորված՝ դատավարական (քրեական, քաղաքացիական և վարչական) կոնկրետ ընթացակարգի շրջանակներում արդար, հրապարակային դատաքննությամբ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու համար:

Հայաստանում դատավարական իրավունքները և պարտականությունները իրականացվում են հիմնականում դատավարական օրենսգրքերով, որոնք թվով երեքն են՝ Վարչական դատավարության օրենսգիրքը, Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, Քրեական դատավարության օրենսգիրքը: Դատավարական կանոններ առկա են նաև այլ նորմատիվ իրավական ակտերում, սակայն գործերի պրոցեսուալ մասը սահմանվում է հիշատակված օրենսգրքերով:

Ներքոգրյալում անդրադարձ կկատարվի դատավարական օրենսգրքերում առկա այն իրավական նորմերին, որոնք կարգավորում են հետազոտության առարկային վերաբերվող հարցերը՝ հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիությանը:

Քրեական դատավարության օրենսգիրք

¹¹ Տես Սահմանադրական դատարանի 2016թ. հուլիսի 12-ի թիվ ՍԴՈ-1293 որոշումը, հասանելի է՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=107363>.

¹² Տես թիվ ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222, ՍԴՈ-1257, ՍԴՈ-1289 որոշումներ.

2021թ. հունիսի 30-ին ընդունված Քրեական դատավարության օրենսգիրքը ուժի մեջ է մտնում 2022թ. հուլիսի 1-ին: Օրենսդրական նորմերի ուսումնասիրությունը և վերլուծությունը կկատարվի նոր օրենսգրքով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն հետազոտությունը կազմելու պահին գործող Քրեական դատավարության օրենսգիրքը մասնակի ուժը կորցնելու է նորը ուժի մեջ մտնելու պահից, ուստի նպատակահարմար է անդրադառնալ նոր կարգավորումներին:

Քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության համաձայն՝ թարգմանիչ է նաև համրի նշանները հասկացող և խուլի հետ նշաններով բացատրվելու ունակ անձը:

Պետք է նշել, օրենսդրի կողմից օրենսգրքում հաշմանդամություն ունեցող անձանց նման անվանումներով նշելը պարունակում է խտրականություն և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական արդարադատության շրջանակներում հիշյալ ձևակերպումները օգտագործվում են քրեադատավարական այլ փաստաթղթերում, ստացվում է, որ իր տարածուն բնույթով ունակ է վիրավորել հաշմանդամություն ունեցող անձանց:

Թարգմանիչները, որպես վարույթին օժանդակող անձինք, պարտադիր պետք է մասնակցեն դատական նիստերին և եթե չեն ապահովում դատական նիստերին իրենց մասնակցությունը, ապա դատական նիստը ենթակա է հետաձգման: Քրեադատավարական իրավունքի կոպիտ խախտում է համարվում, երբ մեղադրյալի թարգմանիչ ունենալու իրավունքը խախտվել է իսկ բացառիկ վերանայման բողոք բերելու իրավունքի հիմք նախատեսված է նաև այն դեպքը, երբ դատավարությունը անիրավաչափորեն իրականացվել է թարգմանչի բացակայությամբ և այդ հանգամանքը ազդել է վարույթի ելքի վրա:

Քրեադատավարական իրավունքի կոպիտ խախտում պետք է համարվել նաև այն դեպքերը, երբ տուժող կամ դատավարության մեջ այլ կարգավիճակ ունեցող անձը հնարավորություն չի ունեցել ստանալ թարգմանչի ծառայությունը: Այս կանոնը կարող է հանդիսանալ երաշխիք՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Քրեական դատավարությանը մասնակցող լսողական կամ խոսակցական սահմանափակումներ ունեցող անձինք ապահովվում են գործի նյութերին ծանոթանալու, օրենսգրքով սահմանված այլ իրավունքներից օգտվելու և պարտականություններ կրելու հնարավորությամբ՝ սուրդոթարգմանչի միջոցով, իսկ տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի համար դատավարական փաստաթղթերի և դատական ակտերի հասանելիությունն ապահովվում է օգնականի միջոցով՝ պետական միջոցների հաշվին:

Թարգմանչի ծառայություններ մատուցելու անհրաժեշտությունից ելնելով քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա թարգմանիչ, սուրդոթարգմանիչ կամ օգնական

նշանակելու կարգը, թարգմանչի, սուրդոթարգմանչի կամ օգնականի վարձատրության չափը և կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ¹³:

Քրեական դատավարությունում թարգմանչի վարձատրության գումարները սահմանվում են որպես դատական ծախսեր, որոնց գանձումը Դատարանի կողմից կարող են դրվել դատապարտյալի վրա: Որպես բացառություն սահմանված է, որ դատարանն իրավունք ունի դատապարտյալին լրիվ կամ մասնակի ազատել որպես պետության եկամուտ գանձվելիք դատական ծախսերը վճարելուց, եթե դատապարտյալն անվճարունակ է, կամ գումարի գանձումը կարող է էապես ազդել դատապարտյալի խնամքի տակ գտնվող անձանց նյութական վիճակի վրա:

Հաշմանդամություն ունեցող անձանց թարգմանիչների ծառայությունների դիմաց վճարված ծախսերը չպետք է դրվեն դատապարտյալի վրա, քանի որ դրանք նախատեսված են ապահովելու դատարանի մատչելիությունը և հասանելիությունը:

Քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ Քրեական գործերով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ՝ կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ համր, կույր, խուլ լինելու, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների այլ էական խանգարման, երկարատև ծանր հիվանդության, ինչպես նաև տկարամտության, բացահայտ մտավոր անզարգացածության, այլ ֆիզիկական կամ «հոգեկան պակասությունների» հետևանքով:

Անհրաժեշտ ենք համարում հիշյալ դատավարական նորմը ենթարկել փոփոխությունների, մասնավորապես «ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների» ձևակերպումը օրենսգրքում խտրական է և չի բխում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներից: Ինչպես նաև անհրաժեշտ է կատարել փոփոխություններ և ձերբազատվել «համր, կույր, խուլ լինելու» արտահայտություններից և դրա փոխարեն օգտագործել խոսակցական, լսողական, տեսողական խնդիրներ ունեցող բառակապակցությունների:

Քրեական դատավարության օրենսգրքը հանդիսանում է իրավունքների ներգործման աստիճանով ամենաբարձր դատավարական օրենքներից մեկը: Օրենքի նոր լինելը որոշակի ազդեցություն է թողել և առկա են կանոններ, որոնք որոշակի առումով երաշխավորում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը: Սակայն առկա են խնդիրներ, որոնք սահմանափակում են այն պնդումը, որ քրեական դատավարությունում հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատությունը հասանելի է լիարժեքորեն:

¹³ Տես ՀՀ կառավարության 2018թ. նոյեմբերի 22-ի թիվ 1334-Ն որոշումը, հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=153941>

Քաղաքացիական դատավարության օրենսգիրք

Քաղաքացիական դատավարության գործող օրենսգիրքը ուժի մեջ է մտել 2018թ. ապրիլի 9-ին¹⁴: Քաղաքացիական դատավարությունում լսողական կամ խոսակցական խանգարումներ ունեցող անձինք ապահովվում են գործի նյութերին ծանոթանալու, օրենսգրքով սահմանված այլ իրավունքներից օգտվելու և պարտականություններ կրելու հնարավորությամբ՝ սուրդոթարգմանչի միջոցով, իսկ տեսողական խանգարումներ ունեցող անձանց համար ապահովվում է դատական ակտերի հասանելիությունը՝ մատչելի եղանակով:

Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը մրցակցային դատավարություն է, որի ընթացքում հնարավորինս նվազեցված է դատարանի դերակատարումը գործի քննության ընթացքում կողմերի դատավարական գործողությունների մեջ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որպեսզի տեսողական խանգարումներ ունեցող անձանց համար ոչ միայն ապահովվի դատական ակտերի հասանելիությունը, այլև ապահովվի դատավարական հետևանքներ առաջացնող այլ փաստաթղթերի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ որոշակի գրավոր ապացույցների հասանելիությունը մատչելի եղանակով:

Անհրաժեշտություն է նաև դատական նիստերը առանց թարգմանչի չիրականացնելու կանոնի ամրագրումը: Ներկայիս իրավակարգավորման շրջանակներում առանց հարգելի պատճառների երկու հաջորդական դատական նիստերին թարգմանչի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար, որը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության շրջանակներում վիճելի իրավադրույթ է: Պետությունը պետք է ձեռնարկի դատարանի մատչելիությունը և թարգմանչի կողմից դատական նիստին ներկա չգտնվելը, անկախ հարգելի կամ անհարգելի լինելու հանգամանքից, հիմք է դատական նիստը պարտադիր հետաձգելու համար:

Ընդ որում, պետք է փոփոխության ենթարկվի Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 8-րդ մասը¹⁵ և նախատեսվի դատական ակտը բեկանելու անվերապահ հիմք՝ դատական նիստը թարգմանչի բացակայությամբ անցկացնելու վերաբերյալ:

Նախնական դատական նիստում լուծման ենթակա հարցերի շրջանակը որոշվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հերթականությամբ, որի 11-րդ կետով քննարկվում են թարգմանիչ ներգրավվելու հարցը: Մինչև այդ հարցի քննարկումը, ըստ էության, իրականացվում են բազմաթիվ դատավարական լուրջ

¹⁴ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված 2018թ. փետրվարի 9-ին. հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159094>.

¹⁵ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածը սահմանում է դատավարական իրավունքի նորմերի խախտման կամ սխալ կիրառման հիմքերը, այդ թվում դատական ակտը բոլոր դեպքերում բեկանման հիմքերը.

հետևանքներ առաջացնող հարցերի վերաբերյալ քննարկումներ և որոշումների կայացում, օրինակ՝ հայցադիմումի և պատասխանի (առարկության) փաստական և իրավական հիմքի պարզումը, ընդդատության, դատավարության մասնակիցների հետ կապված հարցերը, ապացուցման ենթակա փաստերի և ապացուցման պարտականության բաշխման հետ կապված հարցեր: Այդպիսով անհրաժեշտ է թարգմանչի ներգրավվման իրավական հարցը քննարկել առաջին իսկ հնարավորության դեպքում՝ առաջին դատական նիստի ընթացքում՝ դատական նիստը բացված համարելուց անմիջապես հետո:

Քաղաքացիական դատավարությունում գործի քննության հետ կապված ծախսեր են հանդիսանում նաև թարգմանիչներին վճարվելիք գումարները (հոդված 105), որոնք բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Ինչպես Քրեական դատավարության օրենսգրքի դեպքում, սույն դեպքում նույնպես անհրաժեշտ է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց դատարանի մատչելիությունը՝ առանց հետագայում վերջիններիս հաշվին ծախսերի հատուցման հնարավորության:

Վարչական դատավարության օրենսգիրք

Ինչպես Քաղաքացիական դատավարության օրենսգրքով, այդպես էլ Վարչական դատավարության օրենսգրքով լսողական կամ խոսակցական սահմանափակումներ ունեցող անձինք ապահովվում են գործի նյութերին ծանոթանալու, օրենսգրքով սահմանված այլ իրավունքներից օգտվելու և պարտականություններ կրելու հնարավորությամբ՝ սուրդոթարգմանչի միջոցով:

Սակայն ի տարբերություն Քաղաքացիական և Քրեական դատավարության օրենսգրքերի տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող վարչական դատավարության մասնակիցն ունի պետական միջոցների հաշվին օգնականի իրավունք, եթե ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի օգնական ունենալու համար: Անհասկանալի է օրենքների միջև նմանօրինակ տարբերակումների օբյեկտիվ հիմքերը: Անկախ անձի ֆինանսական հնարավորությունները, դատարաններում պետք է ապահովվի տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձանց դատարանի մատչելիությունը:

Օրենսգրքում նաև բացակայում են լսողական կամ խոսակցական խանգարումներ ունեցող անձանց համար գործի նյութերին ծանոթանալու, օրենսգրքով սահմանված այլ իրավունքներից օգտվելու և պարտականություններ կրելու հնարավորությունները, իսկ տեսողական խանգարումներ ունեցող անձանց համար բացակայում են դատական ակտերի, դատավարական փաստաթղթերի և անհրաժեշտության դեպքում գրավոր ապացույցների հասանելիությունը՝ մատչելի եղանակով:

Վարչական դատավարության օրենսգրքում թարգմանիչների դատական նիստին ներկա չգտնվելը չի հանգեցնում դատական նիստի անվերապահ հետաձգման և Դատավորը իրավասու է որոշել դատական նիստը շարունակելու մասին, որը վիճելի է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Անհրաժեշտ է օրենսգրքով նախատեսել կանոններ, որոնց համաձայն այն դատական ակտերը, որոնք կայացվել են առանց թարգմանիչների, ենթակա են դատական սխալի հիմքով բեկանման:

2.3. Ներպետական ռազմավարություններ և հայեցակարգեր

Մարդու իրավունքների պաշտպանության պետության հանձնառությունը, աշխատանքի առաջնահերթություններն ու գերակայությունները կարող են արձանագրվել ռազմավարական փաստաթղթերում: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցում նույնպես թե՛ իրավիճակային գնահատումը, թե՛ պետության կողմից իրականացվելիք ապագա անելիքներն ամրագրվում են մի շարք ռազմավարություններում ու ծրագրերում:

Հաշմանդամություն ունեցող անձանց դատարանի մատչելիության առումով պետության պարտականությունները կատարելու առումով կարևոր է ուսումնասիրել այդ ռազմավարությունները և ծրագրերը, որպեսզի պարզվի թե որքանով են այդ ռազմավարություններն արտացոլում քննարկվող ոլորտում առկա իրական պատկերը, որքանով են դրանք թիրախային, առարկայական ու հասցեական: Անհրաժեշտ է նաև արձանագրել արդյո՞ք այդ ռազմավարական նպատակները շարունակական բնույթ են կրում և ուղղված են առկա խնդիրների լուծմանը՝ թեկուզև աստիճանաբար եղանակով:

Հատկանշական է, որ ոլորտի կարգավորման ուղղված հարցերը ընդգրկված են տարբեր ռազմավարություններում և ոլորտային փաստաթղթերում, և առկա է անհրաժեշտություն ընդհանրական և որոշակի առումով փոխհատվող կարգավորումներ նախատեսող փաստաթղթերի առումով իրականացնել ներդաշնակեցման ու հաշվետվողականության ապահովում:

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին

Կառավարության որոշումը¹⁶ սահմանում է Հայաստանի դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրանից բխող գործողությունների ծրագիրը՝ բաժանված երկու ժամանակահատվածով 2019-2020 թվականների և 2021-2023 թվականների: Որոշման 4-րդ հավելվածով նաև նախատեսվել է էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների

¹⁶ ՀՀ կառավարության որոշում, ընդունված 2019թ. հոկտեմբերի 10 թիվ 1441-Լ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138194>

Էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագիրը:

Որպես դատարանների շենքային պայմանների բարելավում և տեխնիկական աջակցության տրամադրում ենթաբաժնով ծրագիրը սահմանել է հետևյալը. «Հայաստանի Հանրապետությունում դեռևս առկա են դատարանների կամ դրանց նստավայրերի վարչական շենքերի համար ոչ բավարար տարածքի կամ այլ պետական մարմինների նստավայրերից պատշաճ կերպով սահմանազատված չլինելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը դատարան ապահովելու խնդիրներ: Որոշ դատարանների շենքեր նաև ապահովված չեն նվազագույն անհրաժեշտ պայմաններով՝ դատական նիստերի դահլիճներով, բաց և փակ գոտիներ ստեղծելու հնարավորությամբ և այլն: Հետևաբար՝ անհրաժեշտ է իրականացնել համապատասխան վերանորոգման/վերակառուցման աշխատանքներ՝ այդ թվում՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող անձանց համար դատարանների շենքերի մատչելիությունը»:

Դատական և իրավական բարեփոխումների 2019-2020 թվականների գործողությունների ծրագրով նախատեսվել է որպես գործողություն. դատարաններին ապահովել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով: Այդ գործողության իրականացման համար նշանակված է երեք պատասխանատու մարմիններ՝ Արդարադատության նախարարությունը, Ֆինանսների նախարարությունը և Բարձրագույն դատական խորհուրդը համաձայնությամբ:

Ռազմավարական գործողության էլակետային դրությունը արձանագրվել է, որ Հայաստանում դեռևս առկա են դատարանների կամ դրանց նստավայրերի վարչական շենքերի համար ոչ բավարար տարածքի կամ այլ պետական մարմինների նստավայրերից պատշաճ կերպով սահմանազատված չլինելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը դատարան ապահովելու խնդիրներ: Նշվել է, որ որոշ դատարանների շենքեր նաև ապահովված չեն նվազագույն անհրաժեշտ պայմաններով՝ դատական նիստերի դահլիճներով, բաց և փակ գոտիներ ստեղծելու հնարավորությամբ և այլն:

Ինչպես նշվեց վերոգրյալում ռազմավարական նպատակի իրականացումը 2019-2020 թվականների գործողության ծրագրով բաժանվել էր երկու մասի՝ առաջին մասով 2019 թվականին պետք էր իրականացվեր դատարանների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատում, իսկ 2020 թվականին պետք էր ավարտվեր գնահատումը և դատարանները պետք է սկսեին ապահովվել արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով ըստ սահմանված առաջնահերթությունների և ժամանակացույցի:

Պետության կողմից ռազմավարական ծրագրով սահմանված իր պարտավորությունները կատարելու ստուգման միջոցը պետք էր հանդիսանար շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատման, առաջնահերթությունները և ժամանակացույցը սահմանելու վերաբերյալ տեղեկանքը և շինարարական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը: Իսկ որպես ակնկալվող արդյունքում պետք էր հանդիսանար դատարանների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանները:

Վերոգրյալ ռազմավարական նպատակները և գործողությունների ծրագիրը բավականին հավակնոտ է, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագրի ժամանակահատվածը արդեն իսկ անցել է, կարող ենք իրականացնել գնահատում և պարզել, արդյո՞ք պետությունը կատարել է իր կողմից ստանձնած պարտավորությունները թե՛ ոչ:

Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող 2021-2023 թվականների գործողությունների ծրագիրը՝ սահմանված է Կառավարության որոշման 3-րդ հավելվածում:

Ինչպես 2019-2020 թվականների գործողության ծրագրով, 2020-2023 թվականների ծրագրի գործողությունը նույնն է՝ դատարաններին ապահովել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով: Պատասխանատու պետական մարմինները և ելակետային դրությունը նույնպես նույն անձինք են ու նույն իրավիճակն է նկարագրված: 2021-ից 2023 թվականներին յուրաքանչյուր տարի պետք է իրականացվի դատարանների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով՝ ըստ սահմանված առաջնահերթության և ժամանակացույցի: Վերջնական նպատակով պետք է Դատարանները ապահովված լինեն իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով:

«Հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիությունը Հայաստանում» ծրագրով իրականացված գործողությունների ընթացքում եռամսյա դատարանների մոնիթորինգում չենք հայտնաբերել որևէ դատարան, որտեղ իրականացվում էին շինարարական աշխատանքներ: Հանդիպումների և քննարկումների ընթացքում հարցազրույցներ ենք ունեցել և Բարձրագույն դատական խորհրդի և Արդարադատության նախարարության ներկայացուցիչների հետ, որոնք չեն ներկայացրել տվյալներ, որ ընդհանրապես իրականացվել է հիշյալ ռազմավարական նպատակի և գործողությունների ծրագրից կարիքների գնահատումը, առաջնահերթությունները, ժամանակացույցը և պլանավորվելիք շինարարական աշխատանքը: Միայն ՁԼՄ-ների կողմից կատարված հրապարակումներում առկա են հարցազրույցներ¹⁷, որոնց համաձայն շենքային պայմանների խնդիրները գույքագրված են:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ պետությունը պատշաճ չի իրականացրել Դատական և իրավական բարեփոխումների 2019-2021 թվականների գործողությունների ծրագրով սահմանված նպատակը և գործողությունների ծրագիրը և առկա չեն այն գործողությունները, որոնք պետք է իրականացվեին հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիությունը ապահովելու նպատակով:

Հարկ է նշել, որ ոչ միայն առկա չէ խնդիրների լուծման ուղղված քայլերը, այլև առկա չեն խնդիրների գույքագրումը, դրանց առաջնահերթությունների կազմումը, ժամանակացույցի ձևավորումը, որոնք, միանշանակ, չեն պահանջում ֆինանսական ներդրումներ կամ այլ

¹⁷ ՁԼՄ-ի հրապարակումը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://bit.ly/3KVI5pT>

նյութական ռեսուրսներ: Պետության կողմից հիշատակված ոլորտներում առկա նպատակը չի իրագործվել, իսկ գործողությունների ծրագիրը մնացել է անկատար:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր հաստատելու մասին» որոշում¹⁸

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր հաստատելու մասին» որոշման (այսուհետ նաև՝ ռազմավարություն) Հավելված 1-ը սահմանում է պետական կառավարմանը առնչվող մի շարք միջոցառումներ, որոնք, մասնավորապես, ուղղված են աշխատանքային օրենսդրության փոփոխություններին, զբաղվածության կարգավորման, ազգային օրենսդրության բարեփոխումներին և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը վերաբերվող մի շարք բարեփոխումներին:

Կառավարությունը ռազմավարական նպատակի 7-րդ կետում ստանձնել է բավականին հավակնոտ նպատակ՝ «Ազգային օրենսդրության համապատասխանեցում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին: Որպես ծրագրի գործողություն միայն նշվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում» գործողությունը, որը պետք է ուղղված լինի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց համար հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովման իրավական պահանջների սահմանում, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրանց իրավունքների ապահովում՝ բացառելով հաշմանդամության հիմքով խտրականությունը:

Անհրաժեշտ է արձանագրել, որ ազգային օրենսդրության համապատասխանեցումը ՄԱԿ-ի կոնվենցիային չի կարող պայմանավորված լինել միայն օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելով ու դրանով ապահովելով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն և ազգային օրենսդրության համապատասխանեցումը: Փաստորեն առկա է բարձր նպատակ, սակայն բոլոր գործողությունները, որոնք ուղղված են նպատակի իրականացմանը բացակայում են:

Ավելին, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ընդունված օրենքում կարգավորված չեն հաշմանդամություն ունեցող անձանց դատարանի մատչելիության

¹⁸ ՀՀ կառավարության 2019թ. մայիսի 16-ի թիվ 650-Լ որոշում, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=131287>

վերաբերյալ գործնական կանոններ, որոնք կարող են ուղղված լինել առկա խնդիրները լուծելուն:

Այսպիսով, պետք է արձանագրել, որ ռազմավարական ծրագրով սահմանված ազգային օրենսդրության համապատասխանեցումը ՄԱԿ-ի կոնվենցիային դրական քայլ է, սակայն համակարգային գործողությունների մասով առկա են թերի կարգավորում: Մտահոգիչ է, որ Կառավարությունը ժամանակագրական առումով 2020թ. մարտ ամսի առաջին տասնօրյակում համարել է նպատակի իրականացման վերջնաժամկետ, սակայն այդ վերջնաժամկետը պահպանված չէ:

Ռազմավարության 57-րդ կետով սահմանվել է դատարանների շենքային պայմանների փաստացի վիճակի բարելավումը, իսկ որպես գործողություն դատարանների կամ դրանց նստավայրերի վարչական շենքերի թվի ավելացում, վարչական շենքերի վերակառուցում և վերանորոգում 2020թ. սկսած: Վերջնարդյունքով 2023թ. մարտի 1-ին տասնօրյակում պետք է ապահովվի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորումը:

Դատարանների շենքային պայմանների բարելավման (վարչական շենքերի ավելացման, վերակառուցման և վերանորոգման) մեջ ուղղակիորեն սահմանված չէ հաշմանդամություն ունեցող անձանց դատարանի ֆիզիկական մատչելիության հետ կապված կարգավորումները, սակայն, ենթադրվում է, որ ներառված է ընդհանուր բարեփոխման տրամաբանության մեջ:

Դատարանների շենքային պայմանների բարելավման նպատակով որպես ֆինանսական աղբյուր սահմանվել է օրենքով չարգելված միջոցները:

Փաստորեն, հաշմանդամություն ունեցող անձանց դատարանի մատչելիության վերաբերյալ գործնական նպատակներ հնգամյա ռազմավարությամբ առկա չեն, որոնք կարող են քայլ առ քայլ արտահայտել այն ծրագրերը, որոնք Կառավարությունը նպատակադրվել է իրականացնել ազգային կարգավորումները ՄԱԿ-ի կոնվենցիային համապատասխանեցնելու շրջանակներում: Գտնում ենք, որ սույն դեպքում խնդրահարույց է կոնկրետ քայլերի բացակայությունը, որոնք կարող են որոշակի առումով փոխարինեն առկա խնդիրների մեկընդմիջտ լուծմանը, այլ կերպ ասած առկա չէ այն տեսլականը, որը հնարավորություն կտա որոշակի ժամանակաշրջանում աստիճանաբար հասնել ցանկալի արդյունքին:

Թեկուզև առկա է համալիր ծրագրի հնգամյա կտրվածքով գնահատման որոշակի կարգավորումներ, սակայն ընթացիկ մշտադիտարկման արդյունքների ու հաշվետվությունների մասին տեղեկություններ հրապարակված չեն, ուստի կարելի է եզրակացնել որ հնգամյա ծրագրով նախատեսված մշտադիտարկման կառուցակարգը փաստացի չի գործադրվել, ինչը խնդրահարույց է: Ռազմավարությունների իրագործելիության ու արդյունավետության տեսանկյունից առանցքային է հաշվետվողականության և ընթացիկ

մշտադիտարկման գործընթացների ճշգրիտ կազմակերպումը, ինչպես նաև պատասխանատու մարմինների աշխատանքը:

Առկա չէ հաշվետվողականության բարձրացման ուղղված քայլեր, քանի որ չկան գործիքներ ստուգելու՝ (մշտադիտարկելու) թե օրինակ պետությունը որքա՞ն դատական նստավայր է նպատակադրել վերակառուցել կամ համապատասխանեցնել ստանդարտներին, որքա՞ն ժամանակում. բացակայում է ոլորտում որոշակիությունը: Ֆինանսավորման աղբյուրները անորոշ լինելու հանգամանքը խոսում է ռազմավարության ոչ բավարար կարգավորված լինելու հանգամանքի մասին:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 և 2022 թվականների տարեկան ծրագրերին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին Կառավարության որոշումներ

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին Կառավարության որոշումը¹⁹ ներառում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագիրը և տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումների ցանկը:

Ծրագրի 2.9.1-րդ կետով սահմանվել է Հակակոռուպցիոն կոմիտեի մեկ և Հակակոռուպցիոն դատարանների երկու շենքերի կառուցման աշխատանքները, որով ապահովվելու է ֆիզիկական միջավայրի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022 թվականի տարեկան ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին Կառավարության որոշումը²⁰ նախատեսված չէ հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիության հետ առնչվող ծրագրեր:

Վերոգրյալ ծրագրերի նպատակներից է նաև հավասար և մատչելի պայմաններ ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները իրացնելու և հասարակական կյանքին նրանց մասնակցությունը խթանելու համար: Այնինչ իրավունքների պաշտպանության հիմնական միջոցի մատչելիության վերաբերյալ գործունե կարգավորումներ առկա չեն:

Վերոգրյալ երկու տարիների վերաբերյալ տարեկան ծրագրերի և միջոցառումների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ առկա է հիմքեր պնդելու, որ Կառավարությունը ծրագրավորված եղանակով հետամուտ չի լինում հաշմանդամություն

¹⁹ ՀՀ կառավարության 2020թ. սեպտեմբերի 29-ի թիվ 1601-Լ որոշում, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=146444>

²⁰ ՀՀ կառավարության 2021թ. սեպտեմբերի 30-ի թիվ 1621-Լ որոշում, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=156446>

ունեցող անձանց դատարանների մատչելիությունը ապահովելու հարցում, քանի որ ոլորտում գոյություն ունեցող բազմաթիվ խնդիրների և հարցերի վերաբերյալ ռազմավարական կոնկրետ քայլեր ներառված չեն:

ՀՀ կառավարության որոշումը մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին

Կառավարության որոշմամբ²¹ «Իրավահավասարություն, խտրականության արգելք» նպատակներում ամրագրվել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հետևյալ միջոցառումները՝

- ձեռքարկված և կալանավորված անձանց (այդ թվում՝ հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող անձանց) տեղափոխող մատչելի տրանսպորտային միջոցների ձեռքբերում՝ միջազգային չափանիշներին համապատասխան (վերջնաժամկետը՝ 2022թ. առաջին կիսամյակ),
- ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամրնտիր արձանագրության վավերացմանն ուղղված աշխատանքների իրականացում (վերջնաժամկետը՝ 2021թ. առաջին կիսամյակ),
- հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման երաշխիքների օրենսդրորեն սահմանում (վերջնաժամկետը՝ 2020 թ. առաջին կիսամյակ):

Կարող ենք արձանագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին որոշմամբ նույնպես նախատեսված չեն հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիությունը ապահովող կոնկրետ գործողություններ: Հաշմանդամություն ունեցող ձեռքարկված և կալանավորված անձանց տեղափոխող մատչելի տրանսպորտային միջոցների ձեռքբերում միջազգային չափանիշների համապատասխան գործողությունը ծրագիրը ավարտին հասցնելու դրությամբ իրականացված չի եղել: Մոյն հետազոտության վերոգրյալ բաժնում նկարագրված մարդու իրավունքների վերաբերյալ ռազմավարություններով ամրագրված միջոցառումները գործնականում կյանքի կոչելու տեսանկյունից կարևոր են նաև ստանձնած պարտավորությունների կատարման հաշվետվողականությունը և հասարակության մասնակցությունն ու տեղեկացվածությունը: Այս նպատակով էլ մարդու իրավունքների պաշտպանության 2020-2022թթ. ազգային ռազմավարությունը նախատեսել է Համակարգող խորհրդի ստեղծումը, որը համակարգում և մշտադիտարկում է Ռազմավարության և Գործողությունների ծրագրի իրականացումը:

²¹ ՀՀ կառավարության որոշում, 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ, որոշումը, հասանելի է հետևյալ հղմամբ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138194>

Համակարգող խորհուրդը կազմված է հանրային իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից: Խորհրդի գործունեությունն իրականացվում է պարբերաբար անցկացվող նիստերի միջոցով, որոնց ընթացքում քննարկված հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է լինում Մարդու իրավունքների ազգային ռազմավարության հարթակում²² և հրապարակվում է արդարադատության նախարարության պաշտոնական <https://www.moj.am> կայքում:

Պատասխանատու մարմինները միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնում են կիսամյակային և տարեկան կտրվածքով: Այսպես, գործողությունների ծրագրով սահմանված յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու պետական մարմինը սահմանված կարգով յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ժամկետում, արդարադատության նախարարություն և վարչապետի աշխատակազմ է ներկայացնում հաշվետվություն: Ուսումնասիրելով ազգային հարթակում հրապարակված 2020 և 2021 թվականների տարեկան հաշվետվությունները, պարզ են դառնում, որ դեռևս չի իրագործվել հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տրանսպորտային միջոցների ձեռքբերման նպատակը:

ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին որոշում²³

ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին որոշման (այսուհետ նաև՝ միջոցառումների ծրագիր կամ ծրագիր) 10-րդ կետով սահմանվել է նպատակ՝ հաշմանդամության հիմքով խտրականության դրսևորումների բացառում, հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ կյանքի ապահովում: Իսկ որպես գործողություն նախատեսվել է հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովում, հաշմանդամության հիմքով խտրականության դրսևորումների բացառում:

Ծրագրի 5.3. կետում որպես միջոցառում նշված է. «Պետական համակարգի շենքային ենթակառուցվածքների արդիականացման ծրագրի փուլային իրականացում», որի նպատակն է պետական հատվածի շենքային ենթակառուցվածքները համապատասխանեցնել ե ներառականության պահանջներին՝ ապահովելով պատշաճ միջավայր հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի և այցելությունների համար:

Գործունեության միջոցառումների ծրագրի հիմնավորումներով «Դատարանների շենքային պայմանների բարելավում» թիվ 9-րդ գլխով սահմանվել է Կառավարության կողմից հատկացված Երևան քաղաքում որոշակի շենքերում վերակառուցման և վերանորոգման աշխատանքների մասին:

²² Մարդու իրավունքների ազգային ռազմավարության հարթակ, հասանելի է՝ <http://www.e-rights.am/>

²³ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշում, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=158031>

Միջոցառումների ծրագրով նախատեսված չէ հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիության հետ կապված համակարգված աշխատանքների կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան եզրակացնել, որ Պետությունը ձեռնարկում է միջոցներ առկա խնդիրները աստիճանաբար կատարելու ուղղությամբ:

ՀՀ կառավարության «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 30 սեպտեմբերի 2021 թվականի N 1621-Լ որոշմամբ²⁴ ակնկալվող արդյունքներից մեկը շենքերում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովումն է: Սակայն խոսքը վերաբերվում է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների հիմնանորոգմանը:

Հարկ է նկատել, որ «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար դատարանների մատչելիությունն ապահովելու համար հատկացումներ: Իսկ 2021 թվականի պետական բյուջեի ծախսերն ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի հաշվետվության մեջ նշում չկա հաշմանդամություն ունեցող անձանց համար դատարանների մատչելիությունն ապահովելու ուղղությամբ կատարված հատկացումների մասին: Նույնը վերաբերում է նաև 2020 թվականի բյուջեի հաշվետվությանը:

Ամփոփելով վերոգրյալ ռազմավարությունները և հայեցակարգերը, եզրակացնում ենք, որ պետությունը պատշաճ չի կատարում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության շրջանակներում ստանձնած պարտավորությունները, այդ անձանց արդարադատության մատչելիության ապահովումը:

Պետության կողմից գործողությունների բացակայությունը հնարավորություն չի տալիս կատարել գնահատում թե որքան են դրանք թիրախային, առարկայական և հասցեական, ուստի առկա խնդիրները համակարգային են և անհրաժեշտ է կամք և նպատակ այդ խնդիրների լուծման ուղղությամբ գործնական քայլեր իրականացնելու համար:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ռազմավարական նպատակների և գործողությունների ծրագիրը կրում է շարունակական բնույթ միայն արձանագրելու և սահմանելու առումով (այս դեպքում նույնպես առկա են խնդիրներ), սակայն կոնկրետ գործողություններ իրականացնելու առումով բացակայում են հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիությունը ապահովելու շարունակական աշխատանքները:

Վերոգրյալը նաև խնդրահարույց կարող է լինել այն պատճառաբանությամբ, որ ոլորտի կարգավորման ուղղված հարցերը տարբեր ռազմավարություններում և ոլորտային փաստաթղթերում են և անհրաժեշտ է ընդհանրական և որոշակի առումով փոխհատվող

²⁴ Որոշումը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=156446>

կարգավորումներ նախատեսող փաստաթղթերի միջոցով իրականացնել ներդաշնակեցման ու հաշվետվողականության ապահովման աշխատանքներ:

Ոչ համակարգված աշխատանքի, հաշվետվողականության բացակայության պայմաններում անհնար է ապահովել արդյունավետ միջոցներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց դատարաններում ֆիզիկական և հաղորդակցային մատչելիությունը ապահովելու պետության պարտավորությունը:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ դատարանի ֆիզիկական և հաղորդակցային մատչելիությունը

3.1. Դատարանների հաղորդակցային մատչելիությունը

Ծրագրի շրջանակներում իրականացվել են ուսումնասիրություններ արդարադատության համակարգում տեսողական, լսողական, խոսակցական խանգարումներ և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հաղորդակցության և տեղեկատվական հասանելիության վերաբերյալ: Հետազոտության այս բաժինը նպատակ ունի վերհանել արդարադատության համակարգում այն հիմնախնդիրները, որոնք ունեն տեսողական, խոսակցական, լսողական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք:

Ուսումնասիրության ընթացքում փորձել ենք գտնել հետևյալ հարցերի պատասխանները.

- արդյո՞ք դատարաններում ապահովված է հաշմանդամություն ունեցող անձանց դատավարության հասանելիությունը բոլոր միջոցներով, ներառյալ՝ ժեստերի լեզվով, վիդեո և աուդիո ուղեցույցներով, հեռախոսային խորհրդակցությամբ և ուղղորդող ծառայությունների միջոցով, հասանելի կայքերի միջոցով, ռադիո և ինֆրակարմիր համակարգերով, ամրակցող սարքերով և փաստաթղթերի խոշորացուցիչներով, փակ ենթագրերով, բրայլով, էլեկտրոնային հաղորդակցությամբ, Easy Read-ով և պարզ լեզվով, օժանդակվող հաղորդակցության միջոցով.
- արդյո՞ք դատավարական բոլոր փաստաթղթերը (ծանուցումներ, կարգադրագրեր, հրամաններ, և այլն) հասանելի են.
- արդյո՞ք ծանուցումները և այլ տեղեկատվական միջոցները ներառում են պարզ և հասկանալի տեղեկատվություն դատավարության ընթացքի մասին, առ այն թե ինչի՞ն պետք է պատրաստ լինել դատավարության ընթացքում, ի՞նչ է ակնկալվում տվյալ անձից, ո՞ր տեղից վերջինս օժանդակություն կարող է ստանալ դատավարության և իր իրավունքների մասին: Տեղեկատվության տրամադրումը չպետք է լինի օրենքի կամ ուղեցույցի բառացի արտաբերում, այլ պետք է տրամադրվի հասկանալի և պարզ լեզվով.
- արդյո՞ք օժանդակությունը (թարգմանիչներ, ուղեցույցներ, կարդացող սարքեր, օժանդակող անձինք և օժանդակության ցանկացած այլ միջոց) իրական ժամանակում հասանելի են այն անձանց, ովքեր դրա կարիքն ունեն ծանուցումների կամ տեղեկատվական այլ միջոցների հետ ծանոթանալու համար.

- արդյո՞ք հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի է որակյալ իրավաբանական օգնությունը:

Սույն հետազոտության «Ներպետական օրենսդրական կարգավորումները» բաժնում անդրադարձ է կատարվել դատավարական օրենսգրքով սահմանված այն կարգավորումներին, որոնք վերաբերվում են հաշմանդամություն ունեցող անձանց: Սույնով կներկայացվեն եզրահանգումներ այն կանոնների և կարգավորումների վերաբերյալ, որոնք վիճելի և թերի են, որոնք հանգեցնում են հաշմանդամություն ունեցող անձանց՝ դատարանի մատչելիության սահմանափակման:

Քրեական դատավարության օրենսգրքով սահմանվել են հաշմանդամություն ունեցող անձանց մատնանշող խտրական ձևակերպումներ, օրինակ՝ «խուլ», «համր», «հոգեկան պակասություն», «ֆիզիկական պակասություն» և այլ արտահայտություններ: Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ հաշմանդամություն ունեցող տուժողի կամ այլ դատավարական կարգավիճակ ունեցող անձի իրավունքների բավարար պաշտպանություն, մասնավորապես, տուժողի դեպքում օրենսգրքով կոպիտ խախտում չէ, եթե չի ապահովվել այդ անձի՝ թարգմանչի ծառայություն ունենալու իրավունքը: Հաշվի առնելով քրեական դատավարությունում հաշմանդամություն ունեցող տուժող անձանց իրավունքների պաշտպանությունը՝ գտնում ենք, որ այդպիսի կարգավորումները իրավաչափ չեն: Առկա են կանոններ թարգմանիչների ծառայությունների դիմաց վճարված գումարները հաշմանդամություն ունեցող դատապարտյալներից բռնագանձելու վերաբերյալ:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքով տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար լիարժեքորեն ապահովված չէ դատավարական հետևանքներ առաջացնող այլ փաստաթղթերի իսկ անհրաժեշտության դեպքում՝ որոշակի գրավոր ապացույցների հասանելիությունը մատչելի եղանակով: Օրենսգրքով նախատեսված է առանց թարգմանչի ներկայության դատական նիստ իրականացնելու հնարավորություն և այդ կանոնի խախտման դեպքում պետք է այն հիմք հանդիսանա դատական ակտը բեկանելու համար: Դատական գործով թարգմանիչ ներգրավվելու հարցը լուծվում է դատավարական կարևոր գործողություններ իրականացնելուց հետո, որը, գտնում ենք, խիստ վիճելի դրույթ է: Ինչպես Քրեական դատավարության օրենսգրքի դեպքում, սույն դեպքում նույնպես, անհրաժեշտ է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց դատարանի մատչելիությունը՝ առանց հետազայում վերջիններիս հաշվին ծախսերի հատուցման հնարավորության: Ավելին, կան որոշակի վարույթներ, որոնց դեպքում առհասարակ դատական ծախսերը կրում են դիմողները (դատական պաշտպանություն հայցող անձիք), օրինակ հատուկ վարույթներով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-52-րդ գլուխներով նախատեսված դիմումների քննության ժամանակ (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ կետ): Դատական նիստը տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցներով

անցկացնելու դեպքում Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի ուժով թարգմանիչների մասնակցությունը արգելված է, որը նույնպես վիճելի սահմանափակում է:

Վարչական դատավարության օրենսգրքով, ի տարբերություն Քաղաքացիական և Քրեական դատավարության օրենսգրքերի տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող վարչական դատավարության մասնակիցն ունի պետական միջոցների հաշվին օգնականի իրավունք, եթե ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի օգնական ունենալու համար: Վիճելի է օրենքների միջև նմանօրինակ տարբերակումների օբյեկտիվ հիմքերը: Օրենսգրքում նաև բացակայում են լսողական կամ խոսակցական խնդիրներ ունեցող անձանց համար գործի նյութերին ծանոթանալու, օրենսգրքով սահմանված այլ իրավունքներից օգտվելու և պարտականություններ կրելու հնարավորությունները, իսկ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար բացակայում են դատական ակտերի, դատավարական փաստաթղթերի և անհրաժեշտության դեպքում գրավոր ապացույցների հասանելիությունը՝ մատչելի եղանակով: Վարչական դատավարության օրենսգրքում թարգմանիչների դատական նիստին ներկա չգտնվելը չի հանգեցնում դատական նիստի անվերապահ հետաձգման, իսկ այն դատական ակտերը, որոնք կայացվել են առանց թարգմանիչների, ենթակա չեն դատական սխալի հիմքով բեկանման:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում բացակայում են պետական տուրքի գծով արտոնություններ՝ սահմանված հաշմանդամություն ունեցող անձանց համար: ՀՀ օրենսդրությամբ դատարանին վերապահված է հայեցողություն գործին մասնակցող անձանց դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունից ազատելու, սակայն այստեղ օրենսդիրը միայն անձի գույքային դրությունն է որպես հիմք նախատեսել և հաշվի չի առնվել անձի առողջական վիճակը:

Այնուհանդերձ, դատական պրակտիկայում Վճռաբեկ դատարանի կողմից կայացված նախադեպային որոշմամբ անձի հաշմանդամություն ունենալը պետական տուրքի գծով արտոնություն հայցող անձի՝ գույքային ծանր դրության մասին վկայող փաստական հանգամանք է դիտարկվել, որով կարծես դատարաններին տալիս է հնարավորություն այդ հիմքով սահմանել արտոնություն հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչի համատեքստում դատարանի մատչելիությունն է ապահովվում:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում տրված «հաշմանդամ» հասկացության բնորոշումը, այն է՝ հաշմանդամ անձ, որը, առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն, գտել է, որ նման կարգավիճակի ձեռքբերումը վկայում է անձի մոտ առողջական խնդիրների մասին, որոնց հետևանքով վերջինս հնարավոր է չկարողանա զբաղվել աշխատանքային գործունեությամբ, ինչն իր հերթին կարող է հավաստել աշխատավարձի կամ այլ եկամտի բացակայությունը, որպիսիք անմիջականորեն

ագղում են անձի գույքային դրության վրա: Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ կենսաթոշակառու և հաշմանդամ լինելու հանգամանքները վկայում են անձի՝ որոշակի սոցիալական աջակցության անհրաժեշտության մասին, որպիսի փաստական հանգամանքների առկայությունը, գործում հակառակը հավաստող ապացույցների բացակայության պայմաններում ևս կարող են վկայել պետական տուրքի գծով արտոնություն հայցող անձի՝ գույքային ծանր դրության վերաբերյալ²⁵:

Թարգմանիչների որակավորման ստուգումն իրականացվում է Հայաստանի արդարադատության նախարարության կողմից: Ժեստերի լեզվի թարգմանչի որակավորման ստուգումն անցկացվում է Կառավարության 2002 թ. «Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու կարգը հաստատելու մասին» N 193-Ն²⁶ որոշմամբ հաստատված կարգին համապատասխան: Նշված կարգի 10-րդ կետի համաձայն՝ ժեստերի լեզվի թարգմանչի որակավորումը ստուգվում է այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

Ըստ Արդարադատության նախարարության երբևէ չեն ստացել դիմումներ որևէ վարույթում ժեստերի լեզվի թարգմանիչներ ներգրավելու վերաբերյալ, ՀՀ Արդարադատության նախարարությունը նման իրավասություն չունի: Դատարաններից նույնպես երբևէ չեն ստացել նման թարգմանիչներ ապահովելու վերաբերյալ դիմումներ: Արդարադատության նախարարությունը, չնայած որակավորում է ժեստերի լեզվի թարգմանիչներին ժամանակ առ ժամանակ, մինչդեռ որակավորման վկայական ունեցող ժեստերի լեզվի թարգմանիչների թվի և տվյալների վերաբերյալ վիճակագրություն չի վարում:

Ըստ Արդարադատության նախարարության՝ 2020 թ.-ին և 2021 թ.-ին Արդարադատության նախարարության կողմից չեն կազմակերպվել ժեստերի լեզվի թարգմանչի որակավորման ստուգումներ, չեն եղել նաև համապատասխան դիմորդներ, պահանջարկ, հետևաբար 2020 թ.- 2021 թ.-ը չեն որակավորվել համապատասխան թարգմանիչներ:

Նշենք, որ որակավորման հանձնաժողովը չունի իր կազմում ժեստերի լեզվի փորձագետ, ով կկարողանա ստուգել ժեստերի լեզվի թարգմանչի որակավորումը և կկարողանա տրամադրել համապատասխան վկայական, որով եզրակացնում ենք, որ անհնար է ապահովել պատշաճ որակավորման կազմակերպումը:

Նման պարագայում ժեստերի լեզվի թարգմանիչներին իրավասու մարմինները ներգրավում են հատուկ մասնագիտացում ունեցող դպրոցներից, ՀԿ-ներից, մասնագիտացված կրթահամալիրներից, ովքեր ոչ թե որպես այդպիսին թարգմանիչ հանդես գալու լիցենզավորում

²⁵ ՀՀ վճռաբեկ դատարանի 2019թ. ապրիլի 24-ի թիվ ԵՇԴ/0245/02/14 քաղաքացիական գործով որոշում, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132105>

²⁶ Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=67016>

ունեն կամ իրավասություն, այլ ուղղակի տիրապետում են ժեստերի լեզվին, ինչը դատական պրակտիկայում կարող է խնդիրների հանգեցնել, քանի որ որևէ մասնագետի որակավորման առկայությունը հավաստվում է համապատասխան որակավորման վկայականով:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դատական գործերից մեկով 2018 թ.-ին դատարանը տեսողական խնդիրներ ունեցող երեխայի համար մասնագետ ներգրավել է «Կույրերի երեկոյան միջնակարգ դպրոց»²⁷ կրթահամալիրից (Դպրոցը միավորվել է Նիկողայոս Տիգրանյանի անվան N14 հատուկ դպրոցին), ով դատարանում հանդես է եկել որպես դատավարության մասնակից: Մեկ այլ ԵԷԴ/1321/02/12 (դատավոր Գայանե Խաչատրյան) դատական գործով դատարանը ներգրավվել է ժեստերի լեզվի թարգմանիչ՝ Ս. Մալխասյանին, ով նույնպես «Խուլերի միավորման վարչության ՀԿ-ից է ներգրավել որպես դատական գործով պատասխանողի ներկայացուցիչ. վեճը վերաբերվել է բնակարանի տարածության և սեփականության իրավունքի խախտումների վերացմանը:

Մեկ այլ դատական գործով՝ (գործ թիվ՝ ԵԴ/6685/02/18) դատավարության մասնակից Սերյոժա Մովսեսյանը, ով ունի լսողական խնդիրներ, չէր կարողանում իրացնել դատավարական գործընթացներից օգտվելու իր իրավունքները: Մասնավորապես դատարանը փոխարեն գործով ներգրավվի թարգմանիչ կամ բացատրի անձին թարգմանիչ ունենալու իրավունքի մասին, փորձում էր բարձր ձայնով (գոռալով) տեղեկատվություն հաղորդել Պատասխանողին և իրականացնել գործի քննությունը՝ առաջացնելով լարվածություն և ճնշվածության զգացում:

Բարձրագույն դատական խորհուրդը (Դատական դեպարտամենտ) ներկայումս կնքում է թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի և ծառայությունների մատուցման պայմանագիր՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և ՀՀ Կառավարության 2018 թ.-ի նոյեմբերի 22-ի՝ N 1334-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան ծառայություններ մատուցող ընկերությունների հետ:

Ստացված վիճակագրությունից պարզ է դառնում, որ դատարանների համապատասխան որոշումների հիման վրա՝ 2019 թ.-ից մինչև 2021 թ.-ի 1-ին կիսամյակի ավարտը, մատուցվել են սուրդոթարգմանչի (լսողական կամ խոսակցական) ծառայություններ՝ 16 դատական գործի

²⁷ Դպրոցը հիմնադրվել է 1962թ. ՀՀ կույրերի միավորման կողմից և մեկ տարի անց ստացել է պետական հովանավորություն: Նախկինում դպրոցը եղել է ՀՀ ԿԳՆ ենթակայության և կոչվել է «Կույրերի և թույլ տեսողների երեկոյան հանրակրթական հատուկ միջնակարգ դպրոց», իսկ հետագայում դարձել է քաղաքապետարանի ենթակայության՝ «Երևանի կույրերի երեկոյան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ:

շրջանակներում (2019 թվականին՝ 2 դատական գործ, 2020 թվականին՝ 7 դատական գործ, 2021 թվականի 1-ին կիսամյակ՝ 7 դատական գործ):

Ըստ Դատական դեպարտամենտից ստացված տեղեկությունների ՀՀ դատարանների՝ տեսողական, լսողական կամ խոսակցական հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցման նպատակով համապատասխան օժանդակ տեխնիկական միջոցներով համալրված լինելու, ինչպես նաև՝ տեսողական, լսողական կամ խոսակցական հաշմանդամություն ունեցող անձանց համար datalex.am և court.am կայքերի հասանելիության մասով տեխնիկական համալրվածություն և հասանելիություն առկա չեն, դրանց ներդրմանը հնարավոր կլինի անդրադառնալ համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման դեպքում:

Ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտության ընթացքում իրականացրել ենք հարցազրույցներ և քննարկումներ ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ, այդ թվում՝ «Հայաստանի խուլերի միավորման» կենտրոնի հետ: Պարզվեց, որ կենտրոնը անմիջապես չի ստանում դիմումներ կամ առաջարկ դատական և պատկան այլ մարմիններից իրենց թարգմանիչներին ներգրավելու վարույթներին, կազմակերպությունը իրականացնում է ծառայությունների մատուցում ԲԴԽ-ի հետ պայմանագիր կնքած կազմակերպությունների հետ: Ստացված տեղեկատվության համաձայն առկա է 3 թարգմանիչ, որոնք շատ ծանրաբեռնված են աշխատում և առկա է նոր թարգմանիչներ ունենալու կարիք:

Ուսումնասիրության ընթացքում հանդիպում-քննարկում ենք ունեցել Հանրային պաշտպանի գրասենյակի հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվեց Հանրային պաշտպանի պաշտոնական կայք էջը²⁸, որում առկա են հարմարեցումներ լսողական խնդիրներ ունեցող անձանց համար, մասնավորապես՝ կայք էջում տեղադրված տեսագրությունը, որով պարբերաբար իրազեկվում է անձանց իրավունքները, Հանրային պաշտպանին դիմելու ընթացակարգը սուրդոթարգմանչի միջոցով հեռարձակվում է անընդմեջ: Առանձին դեպքերում տեղաշարժողական խնդիրներ ունեցող անձի դեպքում անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է տնայցերով:

Ամփոփելով հաշմանդամություն ունեցող անձանց հաղորդակցության հասանելիության վերաբերյալ օրենսդրական կարգավորումները և փաստացի իրավիճակային հարցերը՝ պարզ է դառնում, որ ոլորտում առկա են խնդիրներ, որոնք խոչընդոտում են անձանց արդարադատության մատչելիությունը: Թեկուզև առաջացած խնդիրների մեծամասնությունը ստանում են իրավիճակային լուծումներ, սակայն դրանք չեն կարող պարունակել բավարար

²⁸ Հանրային պաշտպանի պաշտոնական կայք, հասանելի է՝ <http://hpg.am/am>

երաշխիքներ՝ հաղորդակցության խնդիրներ ունեցող անձանց դատարանում հավասար իրավունքներով հանդես գալու հարցում:

3.2.Դատարանների ֆիզիկական մատչելիությունը.

Սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացրել ենք Հայաստանում առկա բոլոր դատարանների, ԲԴԽ-ի, Հանրային պաշտպանի գրասենյակի դաշտային ուսումնասիրություններ, որի նպատակն է պարզել, արդյո՞ք այդ հաստատություններում ապահովված են հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական հասանելիությունը, թե ոչ:

Դատարանների շենքային պայմանների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը շարադրված է սույն հետազոտության [Հավելված 1-ում](#), իսկ շենքային պայմանները լուսանկարներով ներկայացված է սույն հետազոտության [Հավելված 2-ում](#):

Ուսումնասիրությունները իրականացվել են նախապես որոշված հարցերի շրջանակներում, մասնավորապես ուսումնասիրվել են հետևյալ ուղղությունները.

- դատարանի մուտքի հասանելիությունը.
- դատարանի սանհանգույցների հասանելիությունը.
- դահլիճների հասանելիությունը.
- հարկերի հասանելիությունը.
- դատական նիստերի դահլիճների հարմարությունը.
- սպասասարահների հարմարությունը:

Ուսումնասիրությունների ընթացքում իրականացրել ենք դատական կարգադրիչների հետ հարցազրույցներ, որի ընթացքում ստացել ենք հաշմանդամություն ունեցող անձանց դատարանի հասանելիության հետ կապված իրավիճակային տեղեկատվություն:


Մասնավորապես պարզվել է, որ շատ դեպքերում, երբ դատարան է այցելում հաշմանդամություն ունեցող անձը և շենքային պայմաններից ելնելով խոչընդոտներ են առաջանում անձի կողմից դատական դահլիճ մուտք գործելու համար՝ դատական կարգադրիչները ֆիզիկապես օգնում և աջակցում են:

Սակայն, գտնում ենք, որ դատական կարգադրիչների կողմից նմանօրինակ կարգով աջակցությունը չի կարող փոխարինել պետության կողմից դատարանների շենքային պայմանների բարելավման պարտականությունը, քանի որ այդ օգնությունն արդեն իսկ պարունակում է որոշակի խտրական բաղադրիչներ և իրավիճակից ելնելով, սահմանափակում ունեցող անձը կարող է այլևս դատարան չհաճախել նմանօրինակ իրավիճակում չհայտնվելու համար:

Հարկ է նկատել, որ որոշակի դեպքերում ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ հենաշարժողական հաշմանդամություն ունեցող անձանց համար կառուցված հարմարությունները չեն պլանավորվել և իրականացվել այնպես, որպեսզի դրանք ինելամտորեն օգտագործվեն հաշմանդամություն ունեցող անձանց կողմից: Մասնավորապես առկա են թեքահարթակներ, որոնք կառուցված են այնպիսի թեքությամբ, որը լրացուցիչ դժվարություններ կարող է ստեղծել քաղաքացու համար: Հարկ ենք համարում նշել, որ որոշակի դեպքերում (օրինակ՝ Եղեգնաձորի նստավայրում) թեկուզև առկա են եղել որոշակի հարմարեցումներ, սակայն դրանք ժամանակի ընթացքում վերացել են (քանդվել են):

Շուրջ երեք ամիս դաշտային ուսումնասիրության ընթացքում չենք հանդիպել դատարաններում շինարարական աշխատանքների, որը կարող էր վկայել, որ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին կառավարության որոշմամբ՝ պետությունը 2020 թվականից դատարանների շենքային վերանորոգման կամ վերակառուցման աշխատանքները մեկնարկել էր:

Ներքոգրյալում համապատասխան դիագրամներով կներկայացվում են Հայաստանում դատարանների շենքային պայմանները:



Վերոգրյալից պարզ է դառնում, որ ընդհանուր գործող 43 դատարաններից 11-ում առկա չեն թեքահարթակներ կամ այլ հարմարություններ, որոնց միջոցով ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձինք մուտք կգործեն դատարաններ: Հարկ է նշել, որ թեքահարթակները որոշ դեպքերում հարմար չեն օգտագործման համար, որի արդյունքում հաշմանդամություն ունեցող անձը կարող է կրել դժվարություններ միայնակ այդ

հնարավորություններից օգտվելու ժամանակ: Որպես օրինակ կարող ենք վկայակոչել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արաբկիր նստավայրը, որտեղ շենքի մուտքի մոտ առկա է թեքահարթակ, սակայն բացակայում են բռնակներ կամ այլ հարմարություններ, որի միջոցով հաշմանդամություն ունեցող անձը կարող էր ինքնուրույն մուտք գործել դատարան:

Հաջորդ խնդիրը դատարաններում դահլիճների հասանելիությունն է: Մասնավորապես առկա են դատարաններ, որտեղ դատական նիստերի դահլիճները կամ գրասենյակները սովորաբար գտնվում են նկուղային, երկրորդ կամ ավելի բարձր հարկերում, ուստի կարևոր է ստուգել, արդյո՞ք դատարաններում առկա է դատարանի հարկեր բարձրանալու կամ նկուղային հարկ իջնելու հնարավորություններ:




Հաջորդ հարցադրումը վերաբերվում է դահլիճների հասանելիությանը, որտեղ քննել ենք արդյո՞ք դատարաններում հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի են դահլիճներ: Մա կարևոր է նաև այն փաստի հաշվառմամբ, որ որոշ դեպքերում դատարանը, շենքային պայմաններից ելնելով, չունի հնարավորություն երկրորդ հարկում ապահովել հասանելիությունը, սակայն առաջին հարկում առկա են դահլիճներ, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել:

Որպես օրինակ կարող ենք վկայակոչել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սիսիանի նստավայրը, որը գտնվում է անմխիթար վիճակում՝ Ոստիկանության կողմից օգտագործվող մասնաշենքում: Դատարանի դահլիճները և գրասենյակը գտնվում է մասնաշենքի երրորդ հարկում, որի հասանելիությունը ապահովվում է նեղլիկ աստիճաններով, որտեղ բացակայում են որևէ հարմարություն հաշմանդամություն ունեցող անձին դատական նիստերի դահլիճ նույնիսկ կարգադրիչների կամ այլ անձանց օգնությամբ բարձրացնելու լիարժեք հնարավորություններ:

Դատարանի սանհանգույցը ընդհանուր է մասնաշենքում գործունեություն ծավալով այլ պետական մարմնի հետ, առկա չեն սպասարահներ կամ այլ հարմարություններ:



Հաջորդ խնդրահարույց հարցը դատարաններում սանհանգույցների հասանելիությունն է հաշմանդամություն ունեցող անձանց համար:



Դատարանների ուսումնասիրությունների ընթացքում հանդիպեցինք դատարանների սանհանգույցների անմխիթար վիճակը, որոշ դատարաններում դրանք փակ են պահվում: Սանհանգույցները հիմնականում գտնվում են ոչ բարվոք վիճակում, առկա են մաքրության հետ կապված լուրջ խնդիրներ: Իսկ հաշմանդամություն ունեցող անձանց համար

հասանելիությունը մեծամասամբ խնդրահարույց է նույնիսկ այն դատարաններում, որոնք վերջին ժամանակաշրջանում վերանորոգվել կամ վերակառուցվել են:

Ամփոփում. Ծրագրի շրջանակներում իրականացված դաշտային ուսումնասիրության ընթացքում արձանագրել ենք հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության ֆիզիկական հասանելիության հետ կապված լրջագույն խնդիրներ: Խնդրահարույց են ոչ միայն դեռևս չվերանորոգված և չվերակառուցված մասնաշենքերը, այլև նրանք, որոնցում նախատեսվել են որոշակի հարմարություններ, սակայն դրանց գործնական օգտագործման, ինչպես նաև ժամանակի ընթացքում չվերանորոգելու արդյունքում դառնում են անպիտան: Առկա են խնդիրներ դահլիճների հարմարավետության, սանհանգույցները օգտագործելու և հարկերի հասանելիության հետ կապված: Գտնում ենք, որ պետությունը պատշաճ չի իրականացնում հաշմանդամություն ունեցող անձանց՝ դատարանների ֆիզիկական հասանելիության ապահովման պարտականությունը:

Ամփոփում և առաջարկություններ

Ստորև ներկայացված առաջարկությունները մեծամասամբ հայեցակարգային են: Դրանք կարող են հիմք հանդիսանալ հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիությունը ապահովելու նպատակով լայն մեխանիզմներ, իրավական կառուցակարգեր մշակելու ու կիրառելու համար: Առաջարկները ներկայացվում են Արդարադատության նախարարությանը, որպես ՀՀ կառավարության լիազոր մարմին, ՀՀ ֆինանսների նախարարությանը և ՀՀ բարձրագույն դատական խորհրդին:

Դատավարական օրենսգրքերի փոփոխությունների և լրացումների վերաբերյալ առաջարկներ.

1. Քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ և հանել այն ձևակերպումները, որոնք իրենց բովանդակությամբ կարող են առաջացնել խտրական վերաբերմունք, մասնավորապես՝ «խուլ», «համր», «հոգեկան պակասություն», «ֆիզիկական պակասություն» և այլ արտահայտություններ:
2. Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսել հաշմանդամություն ունեցող տուժողի կամ այլ դատավարական կարգավիճակ ունեցող անձի իրավունքների բավարար պաշտպանություն, մասնավորապես՝ նախատեսել կանոն, համաձայն որի այդ անձանց թարգմանիչ չապահովվելը դատական գործընթացներում համարվում է դատավարական իրավունքի կոպիտ խախտում:
3. Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսել փոփոխություն և բացառել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից պետության կողմից տրված թարգմանիչներին վճարված գումարները փոխհատուցելու ցանկացած հնարավորություն:
4. Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսել փոփոխություն և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար ապահովել դատավարական

հետևանքներ առաջացնող փաստաթղթերի և ապացույցների հասանելիությունը՝ մատչելի եղանակով:

5. Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանել կանոններ, որոնց համաձայն դատական նիստը ենթակա է հետաձգման թարգմանչի բացակայության պայմաններում: Այն դեպքում, երբ դատական նիստը տեղի է ունեցել առանց թարգմանչի ներկայության դիտարկել դա դատավարական իրավունքի կոպիտ խախտում:
6. Քաղաքացիական դատավարությունում գործի նախապատրաստման փուլում սահմանել թարգմանիչ ներգրավվելու հարցի քննությունը առաջնահերթ եղանակով՝ մինչև մնացած դատավարական գործողությունների մեկնարկը:
7. Բացառել քաղաքացիական դատավարության ընթացքում առաջացած թարգմանչին վճարված գումարները, որպես դատական ծախս, հաշմանդամություն ունեցող անձանցից բռնագանձման ցանկացած հնարավորություն: Առաջարկությունը նաև վերաբերվում է քաղաքացիական դատավարության կարգով քննվող հատուկ վարույթներով առաջացած դատական ծախսերի փոխհատուցման հարցի քննությանը:
8. Քաղաքացիական դատավարության կարգով քննություն իրականացնելու ժամանակ դատական նիստը տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցներով անցկացնելու դեպքում Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի ուժով թարգմանիչների մասնակցության արգելքը հանել՝ ապահովելով թարգմանիչների մասնակցությունը դատական նիստին:
9. Վարչական դատավարության օրենսգրքով սահմանել կանոններ, համաձայն որի հաշմանդամություն ունեցող վարչական դատավարության մասնակիցն ունենա պետական միջոցների հաշվին օգնականի իրավունք՝ անկախ գույքային իրավիճակից:
10. Վարչական դատավարության օրենսգրքով սահմանել լսողական և խոսակցական խնդիրներ ունեցող անձանց համար գործի նյութերին ծանոթանալու, օրենսգրքով սահմանված այլ իրավունքներից օգտվելու և պարտականություններ կրելու հնարավորությունները, իսկ տեսողական խանգարումներ ունեցող անձանց համար սահմանել դատական ակտերի, դատավարական փաստաթղթերի և անհրաժեշտության դեպքում գրավոր ապացույցների հասանելիությունը՝ մատչելի եղանակով:
11. Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսել թարգմանիչների դատական նիստին չմասնակցելու հետևանքները, որպես դատական նիստը անվերապահորեն հետաձգելու իրավական հիմք: Թարգմանիչների դատական նիստին չմասնակցելով հանդերձ գործի քննության շարունակությունը պետք է համարվի դատավարական իրավունքի կոպիտ խախտում:

Այլ օրենքներում և կարգավորումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկներ.

1. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ համաձայն իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մեկնաբանությանը, համաձայն որի՝ հաշմանդամություն ունենալը պետք է հանդիսանա պետական տուրքի գծով արտոնություն հայցող անձի՝ գույքային ծանր դրության մասին վկայող փաստական հանգամանք՝ տարաբնույթ կամայական մեկնաբանություններից խուսափելու, դատավարությունը ավելի դյուրին դարձնելու նպատակով:
2. Մշակել քաղաքականություն ժեստերի լեզվով թարգմանիչների քանակը Հայաստանում մեծացնելու ուղղությամբ: Ապահովել մարզերում թարգմանիչ ստանալու իրավունքի գործնական իրացումը՝ մարզերում ժեստերի լեզվով թարգմանիչների քանակը ավելացնելու միջոցով:
3. Ապահովել արդարադատության ոլորտի էլեկտրոնային կայքերի հարմարեցումը (տեխնիկական համալրվածություն և հասանելիություն) հաշմանդամություն ունեցող անձանց հասանելիությունը ապահովելու նպատակով: Մասնավորապես խոսքը վերաբերվում է www.datalex.am, www.court.am, www.concourt.am, www.arlis.am էլեկտրոնային կայքերին:
4. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսել կանոն, համաձայն որի Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը իրավասություն ունենա դիմելու և պետական միջոցների հաշվին ներգրավվելու թարգմանիչ՝ Հանրային պաշտպանի գրասենյակ դիմած հաշմանդամություն ունեցող անձին իրավաբանական որակյալ խորհրդատվություն տրամադրելու նպատակով:
5. Հնարավորինս սեղմ ժամկետներում ներդնել էլեկտրոնային արդարադատության համակարգը քրեական, քաղաքացիական և վարչական դատավարություններում, հնարավորություն տալով առցանց եղանակով ներկայացնել դատավարական փաստաթղթեր, ապացույցներ և այլն: Ինչպես նաև հնարավորություն ստեղծել էլեկտրոնային եղանակով (տեսակապով) հաշմանդամություն ունեցող անձանց համար, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան ներկա գտնվել դատական նիստերին՝ ապահովելով անձին թարգմանիչ ունենալու իրավունքով:
6. Մշակել և իրականացնել Արդարադատության ակադեմիայում դասընթացներ, որոնք վերաբերվում են հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիության հետ կապված առանձնահատկություններին և հարցերին: Դասընթացներ կազմակերպել դատավորների, վերջինիս աշխատակազմում աշխատող անձանց և դատական կարգադրիչների համար: Դասընթացները անհրաժեշտ են նաև խտրականության բացառման վերաբերյալ գիտելիքները ամրապնդելու և հմտությունները զարգացնելու հարցում:
7. ԲԴԽ-ի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ արդարադատության մատչելիության հետ կապված բարեփոխումների շրջանակներում բարձրացնել հաշվետվողականությունը և թափանցիկությունը:

Արդարադատության ֆիզիկական մատչելիության ապահովման հետ կապված առաջարկություններ.

1. Հայաստանի ողջ տարածքում ապահովել հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոցներ, որոնք նախատեսված կլինեն կալանավայրից կամ քրեակատարողական հիմնարկներից հաշմանդամություն ունեցող անձանց դատարան ներկայացնելու համար:
2. Դատարաններում ապահովել անվասայլակներով և այլ հատուկ միջոցներով, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են ժամանակավոր օգտագործման համար տրամադրվել դատարան ներկայացված հաշմանդամություն ունեցող անձին ըստ անհրաժեշտության:
3. Իրականացնել ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին որոշմամբ սահմանված գործողությունները: Մասնավորապես իրականացվել դատարանների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատում: Այնուհետև կարող է իրականացվել առաջնահերթությունների վերաբերյալ եզրակացության կազմում, որը հնարավորություն կտա որոշել ո՞ր դատարանները առաջնահերթ կարիք ունեն վերանորոգման կամ վերակառուցման: Սույն հետազոտության արդյունքները կարող են համարվել հիմք՝ կարիքների գնահատում իրականացնելու համար:
4. Դատարանների շենքային պայմանների գնահատման և առաջնահերթությունները պարզելուց հետո կազմել և հանրությանը ներկայացնել ժամանակացույց, որով պետությունը աստիճանաբար կիրականացնի ոլորտում առկա խնդիրների լուծումները:
5. Դատարաններում շենքային պայմանների ուսումնասիրության և գնահատման ընթացքում ոչ միայն հաշվի առնել կոնկրետ դատարաններում հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված միջոցները ու հատուկ հարմարանքները, այլև գնահատել առկա հնարավորությունները նպատակային և արդյունավետ լինելու հարցը: Ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնել դատարաններում սանհանգույցների հարմարեցվածությունը, քանի որ Ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ խնդիրներ առկա են նաև վերանորոգված կամ վերակառուցված դատական մասնաշենքերում:
6. Նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական մատչելիության համար ժամանակավոր հարմարեցումներ, որոնք կարող են ժամանակավորապես մեղմել առկա խնդիրները մինչև պետության կողմից իրականացվելիք համակարգված լուծումները:
7. Հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիության հետ կապված իրավական փաստաթղթերը կազմել ոչ միայն սահմանելով կարիքը և իրականացվող գործողությունը, այլև առաջադրել կոնկրետ չափելի բաղադրիչներ, որոնք հնարավորություն կտան արձանագրել ոլորտում տեղի ունեցած բարեփոխումների որակը և արձանագրված հաջողությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զգալի են այնպիսի ձևակերպումներ, որոնք ընդհանրական են և որոշակիությունը ապահովված չէ:

8. Սույն ուսումնասիրությամբ ներկայացված առաջարկությունների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց արդարադատության մատչելիության վերաբերյալ քաղաքականություններին, ռազմավարություններին, հայեցակարգերին, օրենքներում փոփոխություն կատարելու նախագծերի քննարկմանը ներգրավվել նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող քաղաքացիական հասարակության անդամներին:
9. Առաջարկվում է ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ բարեփոխումների հանձնաժողով (կարող է հանդես գալ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը), որտեղ ներգրավված քաղաքացիական հասարակության անդամների հետ կարելի է քննարկել բարեփոխումները, ստուգել իրականացվող բարեփոխումների որակը և կազմված ժամանակացույցի պահպանված լինելը: